Հետազոտությունը նվիրված է Երևանի տարբեր բուհերի ուսանողների ֆիզիկական դաստիարակության դասերի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման առանձնահատկությունների բացահայտմանը: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ երեք բուհերի՝ ԵՊՀ-ի, ԵՊՃՀ-ի և ՀՌՀ-ի ուսանողների մեծամասնությունը դժվարանում է զբաղվել առողջարարական ֆիզիկական կուլտուրայով և սպորտով ժամանակի պակասի պատճառով: Ինչը հուշում է այն մասին, որ բուհերում ուսանողների գերբեռնումը ուսումնադաստիարակչական աշխատանքներում կատարվում է ի հաշիվ երիտասարդների առողջության: Որպես խոչընդոտ են հանդիսանում նաև ոչ լիարժեք պատկերացումները առողջարարական ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին: Արդյունքում առաջանում է անտարբեր վերաբերմունք ֆիզիկական և սպորտային ակտիվության, հետևաբար սեփական առողջության նկատմամբ: Տարիքային զարգացման հետ վերաբերմունքը առողջության նկատմամբ փոփոխվում է դրական միտումով:

***Հիմնաբառեր՝** ֆիզիկական կուլտուրա և սպորտ, դրդապատճառ, արժեքային համակարգ, ուսանող, դաստիարակություն:*

Ներածություն

Վերջին տասնամյակներին մեծ ուշադրության են արժանացել երիտասարդների Ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրները: Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում առանձնահատուկ տեղ է տրվում սոցիալապես ակտիվ, ներդաշնակ զարգացած երիտասարդ մասնագետների պատրաստմանը:

Երիտասարդների ներգրավումը ֆիզիկական կուլտուրայի և սպորտային միջոցառումների գործընթացների մեջ էականորեն կապված է առողջության պատկերացումների և նրան կատարմամբ վերաբերմունքի ձևավորման հետ: Այդ մասին է վկայում հատուկ գրականության վերլուծությունը: Մի շարք աշխատանքներում [3, 7, 8 և ուրիշ.] լուսաբանվել են բուհական ուսանողության առողջության պահպանման ու ամրապնդման, առողջ ապրելակերպի, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու դրդապատճառների ձևավորման հիմնահարցերը: Սակայն նշված հիմնահարցերը դեռևս չեն արժանացել բավականաչափ ուշադրության և, ինչպես նշում են ուրբտի մասնագետները, մնում են թերմշակված [4, 10 և ուրիշ.]:

Այս ամենը բացասական է անդրադառնում բուհերի ուսումնական աշխատանքների ծրագրավորման ու կազմակերպման վրա: Այդ առումով մեր կողմից կատարված կոնստենտ (բովանդակային) վերլուծությունը ցույց տվեց, որ ԵՊՃՀ-ի, ՀՌՀ-ի և ԵՊՀ-ի ֆիզիկական դաստիարակության ծրագրերը՝ ըստ կուրսերի, ֆակուլտետների, ունեն որոշակի տարբերություններ կապված ուսումնական բեռնվածության ծավալի, գործնական պարապմունքների բովանդակության ու տևողության, առարկան լուսաբանող տեսական նյութերի, ուսանողության հետ տարվող արտաժամյա՝ սպորտային և առողջարարական, աշխատանքների հետ:

Ամբողջական առումով, այս ամենը անմիջականորեն ազդում է ուսանողների ֆիզիկական կուլտուրայի ձևավորման արդյունավետության վրա:

Հատուկ գրականության մանրակրկիտ վերլուծությունը ցույց տվեց, որ մեր ժամանակաշրջանում բժշկությունը հասել է բարձր նվաճումների. մշակել և պատրաստվել են հիվանդությունների բուժման ու ախտորոշման կատարյալ տեխնիկական միջոցներ: Սակայն նշված առաջընթացի ֆոնի վրա զգալիորեն աճել են նաև հիվանդացության ու մահացության դեպքերը: Գիտնականներին [1, 2, 5, 12 և շատ ուրիշ.] մտահոգում են այն փաստերը, որոնք կապված են դեմոգրաֆիկ ճգնա-

Ժամի, բնակչության կյանքի տևողության նվազման, հոգեկան առողջության վիճակի վատթարացման հետ: Նշված հեղինակների կարծիքով բժշկությունը ներկա և տեսանելի ապագայում անկարող է էականորեն ազդել մարդու առողջության պահպանման վրա: Այդ մասին են վկայում Կ.Ե. Տարասովի, Ե.Կ. Չերնենկոյի [11] և այլ աշխատանքները: Նշված հեղինակների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մինչև նախորդ դարաշրջանի 50–60թթ. առողջության պահպանման գլխավոր խնդիր էր հանդիսանում ինֆեկցիոն հիվանդությունների բուժումն ու կանխարգելումը, ինչը այսօր համարվում են լուծված: Ընթացիկ փուլում ի հայտ են եկել առողջության պահպանման նոր խնդիրներ:

Պատմական զարգացման ներկա փուլում էլ ավելի է ընդլայնվել Ֆիզիկական կուլտուրայի դերն ու նշանակությունը մարդու ապրելակերպի համակարգում: Այն այսօր դիտվում է որպես մարդու հիմնարար արժեքներից մեկը [5, 9 և ուրիշ]:

Վերջին տասնամյակներին առանձնահատուկ ուշադրության են արժանացել երիտասարդների ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու դրդապատճառների ձևավորման հիմնահարցերը: Վերջինս, ըստ մի շարք հեղինակների [3, 4, 7, 8], ֆիզիկական կուլտուրայի կառուցվածքում ունի առանցքային նշանակություն. դրդապատճառային բաղադրիչով է որոշվում անհատի ակտիվության մակարդակը, ուղղվածությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելուն խոչընդոտող պատճառները բուհերի ուսանողների մոտ: Նշված պատճառների բացահայտումը կնպաստի բուհերի ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործմանը:

Մեթոդներ

Խնդիրների լուծման համար օգտագործվել են հետազոտման հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության աղբյուրների, ուսումնական նյութերի վերլուծություն և ամփո-

փում, ուսանողների հարցում, հարցման տվյալների մշակում մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով, ստացված արդյունքների վերլուծություն և ամփոփում:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ մեր կողմից կազմվեցին ֆիզիկական ու սպորտային ակտիվությանը խոչընդոտող հավանական տաս հիմնական դրդապատճառներ:

Ուսումնասիրություններին մասնակցել են ք.Երևանի տարբեր բուհերի՝ ԵՊՃՀ-ի, ԵՊՀ-ի, ՀՌՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի 342 ուսանող:

Հարցման արդյունքների վերլուծության միջոցով փորձել ենք պարզաբանել ուսանողների ֆիզիկական և սպորտային ակտիվությանը խոչընդոտող դրդապատճառների կշիռը և նրանց առանձնահատկությունները տարիքային զարգացման տարբեր փուլերում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Այժմ անդրադառնանք ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելուն խոչընդոտող պատճառների առանձնահատկությունների վերլուծությանը: Բուհերի ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետության բարելավման համար առանձնապես կարևոր է պարզել այն պատճառները, որոնք խոչընդոտում են ուսանողների ֆիզիկական և սպորտային ակտիվությանը:

Այդ առումով ստացված տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ

Հարցված ուսանողների ընդհանուր թվաքանակի 49,1%-ը՝ ժամանակի պակասն ու անտարբերությունը («չեմ մտածել պատճառների մասին»), ըստ ընդհանրացված ցուցանիշի, համարում են ֆիզիկական և սպորտային ակտիվությանը խոչընդոտող գործոն: Նշված գործոնի ածանցված (ամբողջի առանձին բաղադրիչների) վերլուծության արդյունքներից պարզվեց նաև այն, որ հարցված ուսանողների մեծամասնության (52,9%-ի) համար ժամանակի պակասը դիտվում է որպես ֆիզիկական և սպորտային ակտիվությանը խոչընդո-

տող լուրջ դրդապատճառ, իսկ սեփական առողջության նկատմամբ մտահոգ են ընդամենը հարցվածների 55,3%-ը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտային միջոցառումներ կազմակերպելուն վերաբերվող տեղեկատվությունն ու գիտելիքները, ըստ ընդհանրացված ցուցանիշի, բավարարում են հարցված ուսանողների ընդհանուր թվաքանակի 76,1%-ին: Ընդ որում, նրանցից 72,7%-ը նշում են տեղեկատվության, իսկ 79,4%-ը՝ ձեռք բերված գիտելիքների բավարարվածությունը:

Առողջարարական և սպորտային միջոցառումները առավել հավանականությամբ իրագործելի են այն բնակավայրում, որտեղ կան համապատասխան կառույցներ և նախընտրելի սպորտաձևով ու Ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու անհրաժեշտ պայմաններ: Այդ առումով, հարցված ուսանողների ընդհանուր թվաքանակի 67,5%-ը բավարված են իրենց բնակավայրերում գոյություն ունեցող կառույցների առկայությունից ու պայմաններից: Սակայն, նշված գործոնի բաղկացուցիչ մասերի վերլուծությունը ցույց տվեց, որ հարցվածների 45,0%-ի բնակավայրերում բացակայում են անհրաժեշտ կառույցները: Խմբակների ընտրության հարցում իրենց բավարարվածությունն են հայտնել հարցվածների 79,9%-ը:

Սա որոշակի կերպով ազդում է ուսանողների ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու շարժառիթների վրա: Այստեղ շատ կարևոր ենք համարում կիրառել նպաստող և շտկել խոչընդոտող գործոնները: Նման մոտեցումները մեր կարծիքով կօժանդակեն ֆիզիկական դաստիարակության նոր՝ ավելի կատարյալ, եղանակների մշակմանը:

Վերլուծության արդյունքներն այդ ուղղությամբ ցույց տվեցին, որ

– անտարբերությունը («չեմ մտածել պատճառների մասին») ու ժամանակի պակասը՝ նշված բուհերի ուսանողության 48,6–56,4%-ի կողմից, դիտվում են որպես ֆիզիկական և սպորտային ակտիվությանը խոչընդոտող գործոն (գծանկ. 2.1): Ընդ որում, ժամանակի դեֆիցիտը արձանագրվել է բոլոր բուհերի ուսանողության 52–54%-ի մոտ, իսկ սեփական առողջության նկատմամբ մտահոգվածությունը՝ արձանագրվել

ԵՊՀ ուսանողների մեծամասնության՝ 71,1%-ի մոտ (աղ. 2.1.10): Մնացած երկու բուհում վերը նշված ցուցանիշը տատանվում է 50,9% – 57,1%-ի սահմաններում (աղ. 2.1.10):

– Ուսումնասիրված բոլոր բուհերի ուսանողության մեծամասնությունը բավարարված է Ֆիզիկական կուլտուրայի և սպորտային միջոցառումների կազմակերպմանը անհրաժեշտ տեղեկատվությամբ և ձեռքբերված գիտելիքներով:

– Բնակավայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու ընտրության հնարավորություններն ու պայմանները չեն բավարարում ԵՊՀ ուսանողների 54,0%-ն, իսկ ԵՊՀՀ-ի ու ՀՌՀ-ի ուսանողների մոտ այդ ցուցանիշը կազմել է 22,4 – 37,4%:

– Սպորտային պատկանելիքների ձեռքբերման ու մատուցվող ծառայությունների գները՝ ըստ ընդհանրացված ցուցանիշի, մեծամասամբ մատչելի են բոլոր բուհերի ուսանողության 57,4–72,9%-ի համար: Ընդ որում, անձնական համազգեստի և այլ պատկանելիքների առումով նշված բուհերի ուսանողության մեծամասնությունը՝ 70,4–76,5%-ը, ապահովված են բավարար չափով: Համեմատաբար ցածր է մատուցվող ծառայությունների գների մատչելիությունը: Առանձնապես կարելի է նշել ԵՊՀ-ի ուսանողների հնարավորությունները, որոնց 42,5%-ը այդ հարցում ունեն ֆինանսական դժվարություններ:

– Հարցված ուսանողների մեծամասնության կարծիքով սպորտային ավանդույթներն ու բուհի մթնոլորտի աշխատանքների կազմակերպման դրվածքը բացասաբար չեն ազդում ֆիզիկական և սպորտային ակտիվության դրսևորման վրա:

Սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում գործող սպորտային և առողջարարական խմբերի գործունեությունը մեծամասամբ ծավալվում է մասնավոր հիմքերի վրա, որի համաձայն անձնական գույքի, սպորտային համազգեստի և այլ անհրաժեշտ պատկանելիքների ձեռքբերումն, ինչպես նաև մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են անձնական միջոցներից:

Այդ առումով, հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ վերը նշված տնտեսական խնդիրները, ըստ ընդհանրացված գործակցի, լուծելի են ուսանողների ընդհանուր թվաքանակի 68,9%-ի համար: Ընդ որում, նրանցից անձնական համազգեստի և սպորտային այլ պատկանելիքների ձեռքբերման դժվարություն չունեն հարցվածների 74,6%-ը, իսկ մատուցված ծառայությունների դիմաց ուսանողների 36,7%-ը ունեն ֆինանսական դժվարություն:

Վերլուծության ընթացքում պարզվեց նաև այն, որ սպորտային ավանդույթներն և բուհի մթնոլորտի աշխատանքների կազմակերպման դրվածքը հարցված ուսանողների մեծամասնության կարծիքով նպաստում են ֆիզիկական և սպորտային ակտիվության դրսևորմանը:

Եզրակացություններ

Բերված փաստերից երևում է, որ դպրոցը ավարտած և բուհ նոր ընդունված սովորողների զգալի մասը անտեղյակ է, հետևաբար նաև անտարբեր է սեփական առողջության պահպանման ու ամրապնդման, հետևաբար առողջ ապրելակերպի նկատմամբ: Սա հուշում է այն մասին, որ ֆիզիկական դաստիարակության գործընթացում անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել սովորողների ինքնագիտակցության ձևավորմանը:

1. Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ ֆիզիկական և սպորտային ակտիվության դրսևորմանը անհրաժեշտ կառույցները բացակայում են հարցված ուսանողների ընդհանուր թվաքանակի 45,0%-ի բնակավայրերում:

2. Հետազոտման արդյունքներից երևում է նաև այն, որ ուսանողների գերակշռող մասը (74,6%) բավարարված է անձնական համազգեստի, գույքի և այլ պատկանելիքների առումով: Իսկ սպորտային և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներին մատուցված ծառայությունների դիմաց դժվարանում են վճարել հարցված ուսանողների

ընդհանուր թվաքանակի 36,7%-ը: Ընդ որում, առավել բարձր տոկոս է արձանագրվել ԵՊՀ-ի ուսանողների մոտ (61,0%): Տարիքային առումով, վճարման գները պրոբլեմատիկ են ավագ տարիքային խմբի ուսանողների 57,4%-ի համար:

3. Սպորտային ավանդույթները և բուհում ոլորտի աշխատանքների կազմակերպման դրվածքը նպաստում են, ըստ ԵՊՀ-ի և ՀՌՀ-ի հարցված ուսանողների մեծամասնության կարծիքի, ֆիզիկական և սպորտային ակտիվության դրսևորմանը: Դրա հետ մեկտեղ, ԵՊՀ-ի ուսանողների 74,2%-ը համարում են, որ սպորտային և առողջարարական աշխատանքների թույլ կազմակերպումը խոչընդոտում է ֆիզիկական ակտիվության դրսևորմանը:

4. Հարցված ուսանողների մեծամասնության ընտանիքներում արմատավորված են սպորտային ավանդույթները, ինչը հանդիսանում է դրական նախապայման երիտասարդների դեպի ֆիզիկական կուլտուրան և սպորտը ներգրավման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Брехман И.И.* Валеология-наука о здоровье. М.: ФиС, 1990, 208с.
2. *Басалаева Н.М., Савкин В.М.* Здоровье нации: стратегия и тактика (о палеология.1996, № 2.
3. *Виленский М.Я.* Методологические основы и коцептуальные предпосылки процесса формирования физической культуры личности / Виленский Михаил Яковлевич, Петьков Валерий Анатольевич; РАЕН. М., 2002. 56с.
4. *Виленский М.Я., Образцов П.И., Уман А.И.* Технологии профессионально-ориентированного обучения в высшей школе.Педагогическое общество России, М., 2004.
5. Взаимоотношение спорта и политики с позиций гуманизма / [сост. и ред. В.И. Столяров, Д.А. Сагалаков, Е.В. Стопникова]; Гуманитар. Центр "СпАрт" РГУФК. М.: Астра-пресс, 2005. 256с.
6. *Васильева О.С.* Валеология – актуальное напражление современной психологии // Психологический вестник РГУ. Вып.3. Ростов-н/Д., 1997.

7. Гонтарь О.П. Развитие физической культуры личности студента технического вуза. Автореф, дис.канд.пед.наук. 2012. Барнаул.
8. Иванова С.Ю. Формирование мотивации к занятиям физическими упражнениями и ведению здорового образа жизни студентов вуза. Матер. науч, конференции..2013.<http://sibac.info/index.php>
9. Каган М.С. Эстетика как философская наука. С-Пб., 1997. 240с.
10. Старовойтова С.Ю. Отношение к здоровью рабочей молодежи / Известия Саратовского университета. Сер. Философия. Психология. Педагогика, вып. 2, Т. 12. Саратов, 2012.СС. 92–97.
11. Тарасов К.Е., Черненко Е.К. Социальная детеминированность биологии человека. М.:Мысль.1979, 366с.
12. Физическая культура студента. Учебник // Под ред. М.Я.Виленского, М. 2001.

SUMMARY

The study is expected to identify the relationship of students from different universities of Yerevan to physical education classes. The analysis of the results of the study showed that the performance survey in three universities (RAU, YSU and EGIU) have common characteristics, namely because of the overload and lack of time students are not able to give proper attention to physical culture and sports. This indicates that the training overload in other subjects has an impact on healthy lifestyles of students. The result is a disregard for physical and sports activities, and hence to their own health. With regard to health there is found a positive trend in terms of the age of development.

АННОТАЦИЯ

Исследование предполагало выявления отношения студентов различных вузов Еревана к занятиям по физическому воспитанию. Анализ результатов исследования показал, что показатели опроса по трем вузам (РАУ, ЕГУ и ЕГИУ) имеют общие характеристики, а именно, из-за перегрузок и дефицита времени студенты не в состоянии уделять должное внимания к занятиям физической культурой и спортом. Это свидетельствует о том, что учебные перегрузки по остальным предметам отражаются на здоровом образе жизни студентов. В результате формируется безразличие к физической и спортивной активности, и следовательно, к собственному здоровью. В отношении к здоровью обнаружена положительная тенденция по показателям возрастного развития.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹԵՍԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ս.Ա. Դավոյան

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ
asuegb@asuegb.am (0312)3-58-44

ԱՍՓՈՓՈՒՄ

Թեսթային համակարգի կառուցման դասական մոտեցումը ենթադրում է որոշակի սահմանափակումների շրջանակում թեսթերի միջոցով դիմորդների գիտելիքների գնահատում: Վերջինս մեր կարծիքով զերծ չէ թերություններից, մասնավորապես յուրաքանչյուր դիմորդը անկախ իր գիտելիքներից, 0.2–0.25 հավանականությամբ կարող է տալ ճիշտ պատասխան, թեսթային բազան կարող է լինել ոչ ընդգրկուն և այլն:

Մեր կողմից առաջարկվող մեթոդաբանությունը նախատեսում է թեսթային հարցի ճիշտ պատասխանի մեջ մտնող յուրաքանչյուր նոր տնտեսագիտական կատեգորիայի համար կազմել հաջորդ մակարդակի ենթաթեսթ (որոշակի կանոնակարգի սահմաններում) և յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տալ որոշակի գնահատական: Արդյունքում «սուբյեկտիվ» գործոնի դերը կմոտենա 0-ի:

***Հիմնաբառեր**՝ Ենթաթեսթային համակարգ, հիմնական թեսթ, գիտելիքների գնահատում, նոր կատեգորիա:*

Համաշխարհային պրակտիկայում թեսթային համակարգը կիրառվում է տարբեր ձևաչափերով (հիմնականում ներառելով ուսումնասիրվող ոլորտի ամբողջական ընդգրկումը մեծ քանակով թեսթերի միջոցով կամ ընդգրկելով դրա առավել նշանակալից և հիմնական հասկացությունները, առանձնահատկությունները և այլն)՝ նպատակ ունենալով որոշակի պայմանների շրջանակներում (ժամանակի սահմանափակում, թեսթերի հաջորդականություն և այլն) ստուգելու մասնակիցների (դիմորդների) գիտելիքները և տալու քանա-

կական գնահատական: Թեսթային համակարգի այդպիսի դասական ներկայացումը մեր կարծիքով ունի մի շարք թերություններ, որոնցից հիմնականներն են

1. Անկախ նրանից, թե որ ուսումնասիրվող օբյեկտի (առարկայի) նկատմամբ է կազմված թեսթային համակարգը՝ այն ամբողջությամբ չի արտացոլում դրանց առանձնահատկությունները (արտահայտում է որոշակի մոտավորությամբ):

2. Թեսթային համակարգը՝ կախված դրանք կազմող մասնագետների մասնագիտական մակարդակից, միայն որոշակի ճշգրտությամբ է արտահայտում ուսումնասիրվող առարկայի բոլոր մասնագիտական առանձնահատկությունները:

3. Թեսթային համակարգը ներառում է մասնագիտական տարբեր մակարդակի թեսթեր, որոնք գնահատման համակարգում ունեն միևնույն կշիռները:

4. Ներկայացվող ձևով թեսթային համակարգի միջոցով գիտելիքների ստուգումը և գնահատումը շատ ժամանակատար է և պարունակում է սուբյեկտիվիզմի որոշակի տարրեր (օրինակ, երբ մեկ մասնակցին բաժին են ընկնում ավելի պարզ թեսթեր, քան մյուսներին):

5. Յուրաքանչյուր թեսթի պատահական ճիշտ պատասխանի հավանականությունը միջինում գնահատվում է 0.2–0.25 հավանականությամբ (կախված նրանից, թե թեսթի հնարավոր պատասխանները չորս, թե հինգ տարբերակ են պարունակում): Այսինքն անկախ դիմորդի մասնագիտական մակարդակից՝ մեծ թվով թեսթերի դեպքում նա միջինում կունենա 20–25% դրական պատասխաններ, որը իրենից կներկայացնի թեսթային համակարգի գիտելիքի ստուգման սխալի մեծությունը:

Մեր կողմից մշակված և առաջարկվող մեթոդաբանությամբ կազմված թեսթային համակարգը համարյա ամբողջությամբ զուրկ է վերոնշյալ թերություններից և ունի հետևյալ հիմնական առավելությունները.

1. Թեսթային համակարգով դիմորդների գիտելիքների ստուգումը իրականացվում է այդ գործընթացում մարդկային

գործոնի դերի զգալի նվազեցմամբ (նվազեցում մինչև 0-ի), այսինքն խիստ օբյեկտիվ է:

2. Գիտելիքներ ստուգվող դիմորդի մոտ զարգանում է տրամաբանական գործոնը (քանի որ կապ է հաստատվում տարբեր մակարդակների ենթաթեսթերի ճիշտ պատասխանների մեջ):

3. Կամայական թեսթային և ենթաթեսթային հարցերի պատահականորեն ճիշտ պատասխանելու հավանականությունը խիստ նվազեցվում է և մոտեցվում է 0-ի:

Մեր կողմից մշակված թեսթային համակարգի հիմնական սկզբունքներն են

1. Յուրաքանչյուր թեսթ տեսականորեն կարող է կազմված լինել $i=1,2 \dots n$ մակարդակներից, որտեղ $i=1$ մակարդակը կոչվում է առաջնային կամ հիմնական, իսկ հաջորդները՝ ենթաթեսթեր՝ $i=2,3,\dots,n$:

2. Յուրաքանչյուր թեսթի առաջնային հիմնական մակարդակի թեսթային ճիշտ պատասխանը կարող է պարունակել $j=1 \dots m$ նշանակալի տնտեսագիտական կատեգորիաներ:

3. Յուրաքանչյուր ենթահարցի (ij) մակարդակը կազմում են ենթաթեսթային հարցերը այն տրամաբանությամբ, որ յուրաքանչյուր $i=2 \dots k, k+1, n$ մակարդակում $j=1 \dots 1, 1+1 \dots m$ համար $i=1+k$ մակարդակի ենթաթեսթային հարցերի թիվը առնվազն մեկ հարցով (մակարդակով) պակաս լինի: Վերջին պայմանը դրվում է ենթաթեսթային մակարդակների սահմանափակման համար:

Փորձենք վերոնշյալ թեսթային համակարգի կիրառական մեթոդաբանությունը կիրառել «տնտեսագիտության տեսության» առարկայի համար: Ենթադրենք հիմնական թեսթային հարցն է

1. *Ի՞նչ մակրոտնտեսագիտական ցուցանիշներով է չափվում երկրի տնտեսական աճը* [1, էջ 320]

- a) համախառն արտադրանք
- b) զուտ ազգային եկամուտ
- c) համախառն ներքին արդյունք
- d) ազգային հարստություն:

Այստեղ ճիշտ պատասխանն է համախառն ներքին արդյունքը: Առաջին մակարդակի ենթահարցի հարցը կլինի.

1.1. Ի՞նչ է իրենից ներկայացնում համախառն ներքին արդյունքը: [1, էջ 238–239]

1. Չուտ ներքին արդյունքի, ամորտիզացիոն ֆոնդի, անուղղակի հարկերի ամբողջություն

2. Չուտ ազգային եկամտի, ամորտիզացիոն ֆոնդի, անուղղակի հարկերի ամբողջություն

3. Ազգային եկամտի և ռեզիդենտների կողմից երկիրի ներսում ստեղծված վերջնական ապրանքների ու ծառայությունների ամբողջություն

4. Համախառն ազգային արդյունքի և ռեզիդենտների կողմից երկիրի ներսում ստեղծված վերջնական ապրանքների ու ծառայությունների ամբողջություն:

Այստեղ ճիշտ տարբերակը երկրորդ տարբերակն է, որն իր մեջ ներառում է հետևյալ 3 տնտեսագիտական կատեգորիաները՝ ազգային եկամուտ, ամորտիզացիոն ֆոնդ, անուղղակի հարկեր: Ենթաթեսթային 1-ին մակարդակի ճիշտ պատասխանում տեղ գտած վերոնշյալ 3 տնտեսագիտական կատեգորիաներն էլ կհանդիսանան հիմք ենթաթեսթային 2-րդ մակարդակի հարցերի ձևակերպման համար: Ենթաթեսթային երկրորդ մակարդակը կունենա 3 հարց: Դրանք են

2.1 Համախառն ազգային եկամուտը իրենից ներկայացնում է

1. $ZԱԵ = ZՆԱ +$ ռեզիդենտների գործոնային եկամուտներ (ստացված այլ երկրներում) – ոչ ռեզիդենտների գործոնային եկամուտներ (ստացված տվյալ երկրում):

2. $ZԱԵ = ZՆԱ -$ ռեզիդենտների գործոնային եկամուտներ (ստացված այլ երկրներում) + ոչ ռեզիդենտների գործոնային եկամուտներ (ստացված տվյալ երկրում):

3. $ZԱԵ = ԶՆԱ -$ ռեզիդենտների գործոնային եկամուտներ (ստացված այլ երկրներում) + ոչ ռեզիդենտների գործոնային եկամուտներ (ստացված տվյալ երկրում):

4. ՀԱԵ = ՋՆԱ + ռեզիդենտների գործոնային եկամուտներ (ստացված այլ երկրներում) – ոչ ռեզիդենտների գործոնային եկամուտներ (ստացված տվյալ երկրում):

2.2 Անորտիզացիոն ֆոնդի ձևավորման աղբյուր են հանդիսանում [2, էջ 281]

1. Հիմնական կապիտալի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը

2. Շրջանառու կապիտալի բարոյական և ֆիզիկական մաշվածությունը

3. Շրջանառու կապիտալի բարոյական և հիմնական կապիտալի ֆիզիկական մաշվածությունը

4. Շրջանառու կապիտալի ֆիզիկական և հիմնական կապիտալի բարոյական մաշվածությունը:

2.3 Անուղղակի հարկերը [3, հոդված 2] [5, հոդված 1]

1. Եկամտային հարկ, ԱԱՀ

2. Ակցիզային հարկ, ԱԱՀ

3. Շահութահարկ, ԱԱՀ

4. Եկամտային հարկ և շահութահարկ:

Վերոհիշյալ հարցերը ներկայացնում են ենթաթեսթային 2 մակարդակի հարցերը, և յուրաքանչյուր ենթահարցի ճիշտ պատասխանը ենթադրում է նոր 2 տնտեսագիտական կատեգորիայի առկայություն՝ 1-ով պակաս առաջին մակարդակից:

Կազմենք երրորդ մակարդակի ենթաթեսթային հարցերը՝ թվով 6:

3.1 «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով ռեզիդենտ է համարվում [4, հոդված 4]

1. Այն իրավաբանական և ոչ իրավաբանական անձը, որը հաշվարկային տարվա ընթացքում անընդհատ գործունեություն են ծավալել տվյալ երկրում

2. Այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի կամ որի կենսական շահերի կենտրոնը ՀՀ-ում է, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը

3. ՀՀ ռեզիդենտ է համարվում ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, ցանկացած իրավաբանական անձ և այլ կազմակերպություն, որոնց մշտական գտնվելու վայրը Հայաստանն է (սովորաբար 1 տարուց ավել)

4. ՀՀ-ում ստեղծված իրավաբանական անձինք:

3.2 Նշվածներից որը չի՞ հանդիսանում գործունային եկամուտ

1. ռենտա
2. աշխատավարձ
3. շահույթ
4. գին:

3.3 Հիմնական կապիտալը ենթադրում է

1. Նոր ստեղծվող արժեքին իրարժեքը փոխանցում է մասմաս և չի փոխում իր բնաիրային տեսքը:

2. Նոր ստեղծվող արժեքին իր արժեքը փոխանցում է ամբողջությամբ և չի փոխում իր բնաիրային տեսքը:

3. Նոր ստեղծվող արժեքին իր արժեքը փոխանցում է մաս-մաս և փոխում է իր բնաիրային տեսքը:

4. Նոր ստեղծվող արժեքին իր արժեքը փոխանցում է ամբողջությամբ և փոխում է իր բնաիրային տեսքը:

3.4 Բարոյական մաշվածությանը նպաստում է

1. տոկոսադրույթի աճը
2. գիտատեխնիկական առաջընթացը
3. հարկային դրույքաչափերի աճը
4. ամորտիզացիան:

3.5 Ակցիզային հարկ վճարում են [5 հոդված 3]

1. ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ ներմուծողները

2. ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտահանողները

3. ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ՝ «ներմուծում՝ ազատ շրջանառության» ռեժիմով ներմուծողները

4. ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների գնորդները:

3.6 ՄԱՀ-ով չի հարկվում [3 բաժին 5, հոդված 15, կետ 17]

1. ապրանքների մատակարարումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ իրականացված)

2. ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ իրականացված)

3. ապրանքների ներմուծումը

4. վարկային գործառնությունները:

Չորրորդ մակարդակի ենթաթեսթային հարցերը նույնպես կլինեն թվով 6-ը, բայց այս դեպքում պատասխանում կիրառվող նոր տնտեսագիտական կատեգորիաներ չեն լինի:

4.1 Իրավաբանական անձի վերաբերյալ ո՞ր բնորոշումն է սխալ: [6]

1. Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

2. Իրավաբանական անձը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային իրավունքներ:

3. Իրավաբանական անձը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել անձնական ոչ գույքային իրավունքներ:

4. Իրավաբանական անձը չի կարող դատարանում հանդես գալ որպես հայցվոր:

4.2 Գնի՝ որպես տնտեսական կատեգորիայի, ո՞ր բնորոշումն է սխալ:

1. ապրանքի արժեքի դրամական արտահայտությունը

2. դրամի այն քանակությունը, որը սպառողը վճարում է տվյալ ապրանքի դիմաց

3. դրամի այն քանակությունը, որի դիմաց վաճառողը հրաժարվում է իր ապրանքից

4. արժեքի և անուղղակի հարկերի հանրագումար:

4.3 Ո՞ր տնտեսական կատեգորիայի ձևավորման հիմքում է ընկած արժեքը

1. գին

2. մրցակցություն

3. օգտակարություն

4. արտադրական ծախսեր:

4.4 Գիտատեխնիկական առաջընթացի տեսակներին չի առնչվում [7 էջ 210]


1. հեղափոխական ԳՏԱ
2. համադրված ԳՏԱ
3. էվոլյուցիոն ԳՏԱ
4. համակարգված ԳՏԱ:

4.5 Այլ հավասար պայմաններում եթե ներմուծումը աճի, ապա գուտ արտահանումը

1. կմեծանա
2. կնվազի
3. չի փոփոխվի
4. պատասխանը միանշանակ չէ:

4.6 Վարկերը ըստ նպատակայնության լինում են [8, էջ 128]

1. գյուղատնտեսական
2. կոնստրցիալ
3. օվերդրաֆտ
4. կարճաժամկետ:



Գծանկար 1. Ենթաթեսթային համակարգի կառուցվածքը

Մեր կողմից ներկայացված թեսթային գնահատման մոդելում առկա է ենթաթեսթերի 4 մակարդակ՝ թվով 16 ենթաթեսթային հարցեր: n նոր կատեգորիա պարունակող ենթաթեսթային համակարգի 1-ին ենթաթեսթային մակարդակը կպարունակի 1 ենթաթեսթ, 2-րդ մակարդակը՝ n , 3-րդ մակարդակը $n*(n-1)$, 4-րդ մակարդակը՝ $n*(n-1)(n-2)$, և $(n+1)$ մակարդակը՝ $n!$: Ընդհանուր ենթաթեսթերի քանակը կորոշվի հետևյալ կերպ՝

$$S = 1 + n + n(n-1) + n(n-1)(n-2) + n(n-1)(n-2)(n-3) + \dots + n!$$

Նշված ենթաթեսթային հարցերի գնահատումը նպատակահարմար է իրականացնել կիրառելով հավասար կշիռներ: Հիմնական թեսթային հարցի կշիռը կազմում է 0.3, հետևաբար ենթաթեսթային հարցերի կշիռը կլինի $\frac{1-0.3}{5}$: Եթե թեսթային համակարգով գիտելիքներ ստուգվող դիմորդը պետք է պատասխանի 10 հարցի և առավելագույնը պետք է գնահատվի 100 միավորով (սա պայմանական է՝ կախված գնահատման բալային համակարգից), հետևաբար յուրաքանչյուր հարց կգնահատվի 10 միավոր: Ընդ որում յուրաքանչյուր թեսթային հիմնական հարց կգնահատվի $10*0.3$, միավոր, իսկ ենթաթեսթային հարցը՝ $10*$ միավոր:

Նշված մեթոդի կիրառման ժամանակ առանձնացվում են տվյալ առարկայի շրջանակներում առաջարկվող կատեգորիաները, և մասնակցի գիտելիքի ստուգման գործընթացում ծրագրային ապահովումը սահմանափակում է նույն կատեգորիան մեկնաբանող ենթաթեսթերի կրկնությունը:

Կարևոր է նշել, որ գիտելիքների գնահատման նշված թեսթային տարբերակը կարելի է կիրառել ցանկացած բնագավառում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Курс экономической теории. Под ред. Сидоровича А.В. Общие основы экономической теории. Микроэкономика. Макроэкономика. Основы национальной экономики. 2-е изд., перераб. и доп. М.: Дело и Сервис, 2001.
2. *Бутук А.И.* Экономическая теория: Учеб. Пособие, Киев: Викар 2000, с. 281.
3. Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենք ընդ. 1997թ.
4. Շահութահարկի մասին ՀՀ օրենք, ընդ. 1997թ.
5. Ակցիզային հարկի մասին ՀՀ օրենք, ընդ. 1997թ.
6. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք ընդ. 1998 մայիսի 4-5 հոդվ. 50
7. Экономическая теория. Под ред. Добрынина А.И., Тарасевича Л.С. 3-е изд., испр. и доп. С-Пб.: СПбГУЭФ, Питер, 2004.
8. *Глушкова Н.Б.* Г55 Банковское дело: Учебное пособие. М., Академический Проект; Альма Матер, 2005. (Gaudeamus) ISBN 5-8291-0514-4 (Академический Проект) ISBN 5-902766-08-7 Альма Матер.

ОПЫТ ПРИМЕНЕНИЯ МУЛЬТИМЕДИЙНЫХ ЭЛЕМЕНТОВ В АРМЯНСКИХ ЭЛЕКТРОННЫХ СМИ

Э.А. Рухкян

АННОТАЦИЯ

Научно-техническое развитие, новейшая информационно-коммуникационная среда оказывают влияние на все области человеческой деятельности. Особенно это воздействие заметно в области медиа, подвергая, тем самым, средства массовой информации коренным изменениям.

В данной статье мы попытались понять, насколько оправдано используются мультимедийные элементы в армянских электронных СМИ. Чтобы понять происходящие перемены в армянских редакциях интернет-СМИ, было проведено исследование, на основе которого описаны основные инструменты мультимедийной журналистики, а также даны различные примеры мультимедийных публикаций.

Ключевые слова: мультимедийная журналистика, конвергенция, интернет-СМИ, мультимедийная публикация.

Появление цифровых технологий (телекоммуникационных, вещательных, компьютерных) повлекло за собой большие изменения не только медийных структур, но и медиарынка в целом, где основными становятся процессы конвергенции и интеграции. Как справедливо отмечает писатель Д. Рашкофф, медиа – это «единственная среда, в которой наша цивилизация еще может расширяться... Непрерывно расширяющиеся медиа стали настоящей средой обитания... Это новое пространство называется инфосферой»¹. Как известно, специфика производства медийного продукта отличается от производства традиционных СМИ. В печатных СМИ доминируют текст, иллюстрации, на телевидении – изображение со звуковым сопровождением, на радио – аудиальное воспроизведение различных форм текста. В зависимости от категории мономедийной структуры различаются и методы производства ее продукта, включая концепцию построения форм, конструкцию, стилистическую направленность, жанровые характеристики, процентное

¹ <http://mediavirus.narod.ru/>

соотношение вербального, графического, аудиального, аудиовизуального наполнения и т.д. Казалось бы, принципиальные отличия в подходе, в специфике создания материалов для разных видов СМИ не позволяют найти точки соприкосновения при подготовке медийного продукта.

Трехязычный сайт (арм., русс., англ.) радиостанции «Свобода» azatutyun.am по праву можно назвать «мультимедийным». Сайт отличается разнообразностью имеющихся рубрик, а также предоставлением по максимуму объективной информации. В данном случае мы видим, что редакция сайта довольно активно использует мультимедийные элементы в зависимости от выбранной темы публикации. Azatutyun.am имеет, что очень важно, рубрику «Мультимедиа», куда, в свою очередь, входят подрубрики: «Фото», «Видео», «Эксклюзив», «Фильмы Азатутюн», «Кавказский перекресток».

Обратимся к каждой подрубрике отдельно.

В подрубрике «Фото», как правило, размещаются фоторепортажи на различную тематику с небольшим комментарием под каждым фото. Например, в материале от 5 марта 2015 года под названием «Траур в Донецке» размещены фото с места взрыва на одной шахте Донецка².

В подрубрике «Видео» периодически размещаются видеоматериалы о важных событиях, происходящих в мире и в стране. Например, в материале от 22 февраля 2015 года под заголовком «Вручение “Оскар”» опубликовано небольшое видео (всего в 1 мин.) о том, что фильм «Ида» польского режиссера Павла Павликовски удостоился премии «Оскар» в номинации «Лучший фильм на иностранном языке»³.

Что касается рубрики «Эксклюзив», то здесь, в отличие от предыдущей подрубрики, где большей частью публикуются материалы из других источников (причем, без ссылок на них), можно найти также видеointервью собственных корреспондентов azatutyun.am. В данном случае видеоматериалы более конкретизированы и более обширны (20–30 мин.). К примеру, видео от 10 марта 2014 года под названием «Интервью с послом Украины в Армении»⁴.

² <http://rus.azatutyun.am/media/photogallery/26884393.html>

³ <http://rus.azatutyun.am/media/video/26863823.html>

⁴ <http://rus.azatutyun.am/media/video/25291750.html>

Подрубрика же «Фильмы Азатутюн» не обновлялась почти с 2012 года. Фильм «Последнее путешествие»⁵, повествующий о жизни и творчестве выдающегося армянского поэта и общественного деятеля Ваана Терьяна, был опубликован 12 апреля 2012 года.

Подрубрика «Кавказский перекресток», как уже вытекает из самого названия, представляет собой цикл аудиопередач, подготовленных совместными усилиями армянской, грузинской, азербайджанской служб Радио Свобода и Радио «Эхо Кавказа» в котором подводятся некоторые итоги стран Южного Кавказа, обсуждаются самые важные события и тенденции в Армении, Грузии и Азербайджане. Например, в материале от 29 декабря 2014 года⁶ эксперты и политологи из трех стран обсуждают и подводят политические итоги 2014 года. Это еще один из распространенных сегодня мультимедийных элементов – подготовка материалов в формате аудио.

Таким образом, мы видим, что под «мультимедиа» понимают только отдельно подготовленные видео- или аудиоматериалы. Это вовсе не так. Материал, подготовленный именно в мультимедийном формате, подразумевает использование, как минимум, трех элементов (текст, фото, видео). Конечно, подобные материалы также нашли свое место на сайте, но их не так уж много. Например, интервью от 16 февраля 2015 года с Андреем Макаревичем под заголовком ««В КВН меня уже не зовут»»⁷ подготовлен по вышеизложенному формату, т.е. есть и текст, и фото, и видео, т.е. все по правилам. Но, к сожалению, эту публикацию подготовили не армянские журналисты. Однако приведем в качестве примера материал, подготовленный нашими, отечественными журналистами. В рубрике «Общество» есть материал от 2 марта 2015 года под заголовком «В Гюмри и Ереване на акции протеста вышли таксисты-частники»⁸, повествующий о том, что с 1 марта вступило в силу новое решение правительства, в соответствии с которым таксисты-частники должны ежемесячно выплачивать фиксированную сумму и установить счетчик, стоимость которого, по словам водителей такси, составляет 60–120 тысяч драмов.

⁵ <http://rus.azatutyun.am/media/video/24554455.html>

⁶ <http://rus.azatutyun.am/content/article/26768231.html>

⁷ <http://rus.azatutyun.am/content/article/26852079.html>

⁸ <http://rus.azatutyun.am/content/article/26878153.html>

Таксисты отмечали, что тем самым они лишаются последнего минимального заработка и не могут работать по новым правилам. Материал подготовлен и представлен в стандартном формате: небольшой текст, но всего одно фото. Хотя тема сама подсказывает, что любопытно было бы посмотреть видео недовольных, протестующих таксистов, или хотя бы фоторепортаж. К тому же, каждое фото должно нести в себе информацию, наглядно показывающую происходящее. В данном случае, просмотрев это фото, мы не сможем понять, о чем оно. Фото можно отнести и как к митингу, и как к автомобильной аварии, и как к какому-то мероприятию, и в том числе как к протесту таксистов. Такой подход показывает, скорее всего, непрофессионализм журналистов или же несерьезность в ходе подготовки материала.

Отметим, что на сайте есть также рубрика «Блог», которую ведет Арут Сасунян, издатель и редактор газеты «Калифорнийский курьер». Здесь, обсуждаются и анализируются в основном вопросы, касающиеся Армении: признание Геноцида, Карабахский конфликт, Армянский вопрос. Например, публикация от 2 февраля 2014 года под заголовком «Признание Геноцида армян: необходимо, но недостаточно»⁹ или же статья от 7 февраля 2014 года «Европейский суд по правам человека вмешивается в арцахский конфликт»¹⁰.

Мультимедийная журналистика дает иные, новые возможности для потребителя. Одним из ее свойств является *интерактивность*. В связи с этим справедлив вывод Е.Н. Коротковой: «Мультимедийная журналистика – это современная практическая реализация универсального закона функционирования различных по природе СМИ – взаимодействия, которое в XXI веке отличается таким интегральным качеством как онлайн-овый, мгновенный, персональный характер связи с аудиторией»¹¹. Сегодня ни одно информационное поле не сможет обойтись без комментария. Что-то очень схожее было когда-то и в традиционных СМИ: письма читателей в редакцию, звонки зрителей в студию. Но они не были своевременными и столь эффективными как сейчас. Интерактивность дает возможность также понять непосредственную реакцию: что больше по нраву аудитории, а что – не очень. Таким

⁹ <http://rus.azatutyun.am/content/article/25264104.html>

¹⁰ <http://rus.azatutyun.am/content/article/25256748.html>

¹¹ <http://www.ipk.ru/index.php?id=2230>

образом, потребитель сам выбирает для себя новость. Новые медиа дают более полную, более точную картину происходящего, причем вне зависимости от возраста, профессии, ценностей и т.п. Одним словом, на любой вкус аудитории, что в полной мере раскрывает, обогащает понятие мультимедийной журналистики.

Сайт azatutyun.am активно использует функцию интерактивности. Каждую статью можно комментировать, «поделиться» ею в социальных сетях. Сайт имеет также мобильную версию, что упрощает и делает более доступным его использование.

Проанализировав контент некоторых армянских информационных мультимедийных сайтов, мы пришли к такому выводу, что во многих редакциях существует большая проблема – попытка охвата всех тем. Если проанализировать материалы информационного сайта, где публикуются за день, например, 9–11 материалов, то 7–9 из них непременно будут посвящены несчастным случаям (убийствам, самоубийствам, авариям, пожарам и т.д.).

Приведем пример информационного двуязычного сайта (армянский и русский) – Iragir.am. Нами было проанализировано несколько материалов от 24 декабря 2014 года. Вот заголовки некоторых из них: «В Сент-Луисе полиция застрелила чернокожего тинейджера»¹², «Новая опасность угрожает Кесабу»¹³, «Moody's опасается, что Россия не станет платить долги»¹⁴, «Договор ООН о торговле оружием вступает в силу»¹⁵, «Экономика США разгоняется все сильнее»¹⁶, «Минфин РФ приостановил продажу своих валютных запасов»¹⁷, «Отменим прошлое. Крымский правовой казус»¹⁸, «Вице-премьер Грузии прибыл в Армению»¹⁹, «Абоненты Veeline могут получать бесплатные звонки в роуминге в любой стране мира»²⁰, «Белоруссия и Казахстан извлекли уроки из кризиса на Украине»²¹.

¹² <http://www.Iragir.am/index/rus/0/right/view/39973>

¹³ <http://www.Iragir.am/index/rus/0/country/view/39966>

¹⁴ <http://www.Iragir.am/index/rus/0/right/view/39961>

¹⁵ <http://www.Iragir.am/index/rus/0/politics/view/39972>

¹⁶ <http://www.Iragir.am/index/rus/0/economy/view/39969>

¹⁷ <http://www.Iragir.am/index/rus/0/economy/view/39968>

¹⁸ <http://www.Iragir.am/index/rus/0/society/view/39971>

¹⁹ <http://www.Iragir.am/index/rus/0/country/view/39974>

²⁰ <http://www.Iragir.am/index/rus/0/economy/view/39965>

²¹ <http://www.Iragir.am/index/rus/0/interview/view/39963>

Таким образом, мы убедились, что примерно 60% ежедневной ленты новостей приходится на освещение негативных новостей, что, соответственно, отрицательно влияет на людей (сказывается на настроении, сопутствует стрессу или депрессии). Почему же это происходит? Пресс-службы организаций, которые занимаются такого рода событиями, более системно подходят к сообщению новостей. И, соответственно, небольшие редакции публикуют пресс-релизы, новости и статистику с большим перекосом. Пока мы находимся внутри той или иной редакции, заметить это довольно сложно. Но как только начинаем анализировать контент ресурса, становится понятным, насколько однобока такая вот обычная лента новостей. А подобных «лент новостей» сотни. Совершенно одинаковых, публикующих одинаковые пресс-релизы и сводки, которые, по большому счету, не интересны обычным людям. Нет необходимости пытаться стать информационным агентством, публикуя «полуфабрикат». Необходима тематическая специализация и те настоящие истории, которые будут отличать данный сайт от других.

Перейдем к следующему мультимедийному сайту – civilnet.am. Сайт – один из первых, которые сумели перейти к телевизионному вещанию в он-лайн режиме. Отличие этого сайта от предыдущего в том, что здесь акцент ставится на таком элементе мультимедиа как видео. Причем немало собственных репортажей, освещающих интересные и актуальные темы. Например, цикл передач под названием «Голос народа» посвящен темам, которые чаще всего затрагиваются в обществе в течение одной недели. В данном случае, впрочем, как и в предыдущих, мы видим, что нет правильно подготовленной мультимедийной публикации (истории), которая состояла бы из нескольких мультимедийных элементов. Civilnet.am считает, что, если материал преподнесен в видеоформате, то в этом случае нет необходимости в наличии небольшого разъясняющего текста. И, наоборот, статьи размещены без вспомогательных и дополняющих элементов. В лучшем случае может быть добавлено одно фото.

Например, материал от 4 марта 2015 года под заголовком «Մարզերում մեկնարկում է բրիտանական ֆիլմերի փառատունը»²² («В марзах стартует фестиваль британских фильмов»),

²² <http://civilnet.am/2015/03/04/british-film-festival-armenia-marzes/#.VP1m2o6WkUw>

опубликованного в рубрике «Культура». Материал включает в себя небольшой информационный текст и фотоафиши фестиваля. Неплохо было бы для наглядности подготовить фоторепортаж или же видеointервью с организаторами фестиваля (примерно в две минуты). Ведь такой подход при подготовке материалов и подразумевает универсализацию работников конвергентной редакции и раскрывает понятие «мультимедийного журналиста».

Таким образом, сравнительный анализ вышеперечисленных сайтов доказывает, что не используются имеющиеся, хотя бы ключевые, стандартные мультимедийные элементы в одной публикации. Нет того разнообразия при подготовке мультимедийных публикаций, который встречается на зарубежных мультимедийных сайтах.

Своеобразное свойство, присущее Интернету – передавать ту или иную информацию при помощи различных медийных платформ и в различных формах, т.е. конвергентно – будет являться, скорее всего, предпосылкой возникновения новых жанров в журналистике, в которых будут использоваться разные знаковые системы для передачи информации. Одно из проявлений конвергенции – мультимедийность несет прикладной характер и является более общим процессом. Именно из-за конвергенции и появляются мультимедийные публикации. Исходя из этого, становится ясно, что конвергенция – это процесс сближения различных платформ, а мультимедийность – форма продукта, приготовленного при помощи использования разных знаковых систем.

Мультимедийная журналистика в армянских интернет-СМИ развивается неравномерно. Сравнительный анализ армянских информационных интернет-СМИ показал, что непродуктивно используются мультимедийные инструменты в рамках одного сайта. Как правило, у каждой редакции должны быть свои «мультимедийные предпочтения», т.е. жанры, которыми журналисты владеют лучше остальных. Такого понятия пока нет в нашей практике.

Однако не вызывает сомнения, что потенциал и стремление у мультимедийной журналистики в армянских интернет-изданиях все же есть. Этому способствует, в первую очередь, влияние общемировой тенденции, опыт западных коллег и, конечно же, потребность современной аудитории. Сегодня конвергентная редакция и использование мультимедиа – не просто мода, а необходимость и даже неизбежность. Это – атрибут современного, «про-

двинутого» онлайн-СМИ. Мультимедийные элементы помогают вызвать интерес у широкой аудитории, сделать разнообразной и неидентичной подачу новостей, и что самое главное – улучшить восприятие информации.

ЛИТЕРАТУРА

1. *Аграновский В.А.* Ради единого слова / М.: Изд-во Мысль, 1978.
2. *Амзин А.* Новостная интернет-журналистика / М.: Изд-во Аспект Пресс, 2011.
3. *Багдасарян Г.* Журналистика, журналист и время. Ер., 1981.
4. *Бурдые П.* О телевидении и журналистике. М., 2002.
5. *Ворошилов В.В.* Журналистика / М.: Изд-во В.А. Михайлова (2-е издание), 2000.
6. *Качкаева А.Г.* Журналистика и конвергенция: почему и как традиционные СМИ превращаются в мультимедийные. М., 2010.
7. *Калмыков А.А., Коханова Л.А.* Интернет-журналистика. М.: ЮНИТИ-ДАНА, 2005.
8. *Ким М.Н.* Технология журналистского произведения. С-Пб, 2001.
9. *Лазутина Г.В.* Основы творческой деятельности журналиста, М.: Аспект Пресс, 2004.
10. *Ситников В.П.* Техника и технология СМИ: печать, телевидение, радиовещание. М., 2005.
11. *Тертычный А.А.* Жанры периодической печати: Учебное пособие. М.: Аспект Пресс, 2000.
12. *Третьяков В.* Как стать знаменитым журналистом. М., 2004.
13. *Шибяева Л.* Жанры в теории и практике журналистики: Учебно-методическое пособие.
14. [Электронный ресурс]. Доступно на: URL: <http://www.azatutyun.am/>
15. [Электронный ресурс]. Доступно на: URL: <http://www.a1plus.am/>
16. [Электронный ресурс]. Доступно на: URL: <http://civilnet.am/>

ԹՈՒՐՔԵՐԵՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ

Լ. Թովմասյան

ԱՍՓՈՓՈՒՄ

Յուրաքանչյուր ժողովրդի աշխարհաճանաչումը, ազգամշակութային առանձնահատկությունները, կենսավորված ու սովորույթները վառ արտահայտված են հատկապես առակներում, ասացվածքներում, ինչպես նաև դարձվածքներում: Դարձվածքները հարստացնում են լեզուն, դարձնում այն ավելի պատկերավոր և արտահայտիչ: Բնչպես արևելյան մի շարք լեզուներ, թուրքերենն էլ շատ հարուստ է դարձվածքներով:

Ըստ իմաստային առանձնահատկությունների՝ թուրքերեն դարձվածքները բաժանվում են երկու հիմնական խմբի.

ա) դարձվածքներ, որոնց իմաստը պայմանավորված է նրանց բաղադրիչ հանդիսացող բառերի նշանակությամբ,

բ) դարձվածքներ, որոնց իմաստը պայմանավորված չէ նրանց բաղադրիչ հանդիսացող բառերի նշանակությամբ:

Թուրքերեն դարձվածքների մեծ մասն անմիջականորեն առնչվում է պատմական վաղ շրջանի դեպքերին և իրադարձություններին: Առանց տվյալ դարձվածքի պատմությունն իմանալու հաճախ դժվարանում է դրա իմաստի ընկալումը:

Ըստ ծագման՝ թուրքերեն դարձվածքները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

ա) դարձվածքներ, որոնք առաջացել են պատմական տարբեր անցքերի արդյունքում,

բ) դարձվածքներ, որոնք առաջացել են ժողովրդական բանահյուսության մեջ տեղ գտած հերոսների՝ Հոջա Նասրեդդինի, Բնջիլ Չավուշի, Բեքրի Մուստաֆայի մասին պատմությունների շնորհիվ,

գ) դարձվածքներ, որոնք վերցված են հասարակության ամենօրյա կենսավորվածից, մարդկային հարաբերություններից, թուրք ժողովրդի ավանդություններից և սովորույթներից:

Դարձվածքները կրում են տվյալ լեզուն կրող ժողովրդի ազգամշակութային յուրահատկությունները: Դարձվածքների ճիշտ և տեղին կիրառումը լեզվին հաղորդում է անկրկնելի յուրօրինակություն, ճշգրտություն և արտահայտչականություն:

Հիմնարարներ՝ թուրքերեն դարձվածքներ, Յակուպ Կավասի, ծագումնաբանություն, ազգամշակութային առանձնահատկություններ, Հոջա Նասրեդդին, Ինջիլ Չավուշ, Քեքրի Մուստաֆա:

Յուրաքանչյուր ժողովրդի աշխարհաճանաչումը, ազգամշակութային առանձնահատկությունները, կենսափորձն ու սովորույթները վառ կերպով են արտահայտված հատկապես առակներում, ասացվածքներում, ինչպես նաև դարձվածքներում:

Դարձվածքները հարստացնում են լեզուն, դարձնում այն ավելի պատկերավոր և արտահայտիչ: Ինչպես արևելյան մի շարք լեզուներ, թուրքերենն էլ շատ հարուստ է դարձվածքներով: Թուրք գրականագետ Յակուպ Կավասին ասում է. «Ժողովուրդը չի սիրում շատ խոսել, բայց երբ խոսում է, իմաստալից է խոսում: Դարձվածքները մեր խոսքի աղբ, պղպեղը և բերանի համն են» [1]:

Ըստ առանձնահատկությունների՝ թուրքերեն դարձվածքները բաժանվում են երկու հիմնական խմբի.

ա) դարձվածքներ, որոնց իմաստը պայմանավորված է նրանց բաղադրիչ հանդիսացող բառերի նշանակությամբ. դրանք դյուրընկալելի են, դրանցից շատերի համարժեքները կարելի է գտնել նույնիսկ հայերենում:

Ահա համապատասխան օրինակներ.

Kötü gün dostu (վատ օրվա ընկեր) [2],

Masrafa girmek (ծախսի տակ ընկնել) [3],

բ) դարձվածքներ, որոնց իմաստը պայմանավորված չէ նրանց բաղադրիչ հանդիսացող բառերի նշանակությամբ:

Դիտարկենք օրինակներ.

Abayı yakmak (թաղիքը այրել). համարժեք է «սիրահարվել մինչև ականջների ծայրը» դարձվածքին [4],

Pabucu dama atmak (հողաթափը տանիքը նետել). համարժեք է «կորցնել վստահությունը» արտահայտությանը [5]:

Այս խմբի դարձվածքներն իրենց հերթին բաժանվում են հետևյալ ենթախմբերի.

ա) Դարձվածքներ, որոնք բնորոշ են հասարակ ժողովրդի

խոսակցական բառապաշարին և կրում են առավելապես ժարգոնային բնույթ:

Օրինակներ՝

Dut gibi olmak (թթի նման լինել) (նշանակում է ուժեղ հարբած լինել) [6],

Posta koymak (փոստ դնել) (նշանակում է վախեցնել) [7],

Voli vurmak (ցանց նետել) (նշանակում է զբաղվել վերավաճառքով) [8],

բ) Որոշ մաղթանքներ և անեծքներ, լայն կիրառություն ձեռք բերելով, ստացել են դարձվածքի արժեք:

Օրինակներ՝

Kınalı eller sıkma (հինա դրած ձեռք չսեղմես) (նշանակում է երազանքների չիրականան) [9],

Sakalı göğze dikilesice (մորուքը երկինք ուղղել) (նշանակում է մահանալ) [10]:

Ըստ կառուցվածքի՝ դարձվածքներն արտահայտվում են ա) բառակապակցություններով՝

Acemi çaylak (անփորձ անգղ) [11],

Aslan payı (առյուծի բաժին) [12],

Demoklesin kılıcı (դամոկլյան սուր) [13],

բ) նախադասություններով՝

Çingene çalar, kürte oynar (գնչուն նվագում է, քուրդը՝ պարում) (նշանակում է խառնաշփոթ է տիրում) [14],

Maymun gözüne açtı (կապիկը աչքը բացեց) (նշանակում է այլևս հնարավոր չէ խաբել) [15],

գ) հանգավորված երկտողով՝

Yaşı ne, (տարիքն ինչ է)

Başı ne (գլուխը՝ ինչ) [16]:

Թուրքերեն դարձվածքների մեծ մասն անմիջականորեն առնչվում է պատմական վաղ շրջանի դեպքերին և սոցիալական միջադեպերին: Հաճախ առանց տվյալ դարձվածքի պատմությունն իմանալու դժվարանում է դրա իմաստի ընկալումը:

Ըստ ծագման՝ թուրքերեն դարձվածքները կարելի է դասել հետևյալ խմբերի.

ա) Դարձվածքներ, որոնք ծագել են պատմական անցքերի, մարդկային բախումների արդյունքում: Դրանք սովորաբար կիրառվում են մարդկային ուժեղ և թույլ գծերը նկարագրելու, դրանք ըստ հատկանիշների բնութագրելու նպատակով: Ուշագրավ է հետևյալ օրինակը.

Altından Çapanoğlu çıkmak (տակից Չափանօղլու դուրս գալ) (նշանակում է գործի ընթացքում անսպասելի դժվարությունների հանդիպել) [17]:

1764 թվականին Միվասի վալին պաշտոնից հեռացվում է, և նրա փոխարեն նշանակվում է Մուստաֆա Չափանօղլուն: Նույն ժամանակ իր եղբայր Սուլեյման բեյն էլ Յոզգաթի վալին էր: Նա իր գորքով հարձակվում և գրավում է Ամասիան, Անկարան, Կայսերին, Մարաշը: Չափանօղլուների անունը սարսափ է առաջացնում ողջ տարածքում: Որևէ բարդ հարցի լուծում փնտրելիս պետական պաշտոնյաներից մեկն ասում է. «Այս գործը շատ մի՛ փորփրեք, տակից Չափանօղլու դուրս կգա»:

Երբ որևէ բան իր գնից շատ ավելի թանկ գնով են փորձում վաճառել, կիրառում են Ateş pahası (կրակի գին ունի) դարձվածքը [18], որի ծագման պատմությունը հետևյալն է. սուլթան Սուլեյմանը որս անելիս է լինում, երբ հորդառատ անձրև է սկսվում: Նա պատսպարվում է մի գյուղացու տանը, որը չի ճանաչում սուլթանին: Սուլեյմանը մոտենում է կրակին տաքանալու և ասում է. «Այս կրակը հազար ակչե արժի»: Հաջորդ առավոտյան գյուղացին իր ծառայությունների համար հազար մեկ ակչե է պահանջում: Սուլեյմանի զարմացած հարցին, թե ինչու այդքան թանկ, գյուղացին պատասխանում է. «Դուք ասացիք, որ կրակը հազար ակչե արժի, մեկ ակչե էլ արժի մեկ գիշերը»:

բ) Դարձվածքներ, որոնք ծագում են ժողովրդական բանահյուսության մեջ տեղ գտած հերոսների՝ Հոջա Նասրեդդինի, Ինջիլ Չավուշի, Բեքրի Մուստաֆայի մասին պատմություններից: Այս շրջանի դարձվածքներն արտացոլում են սոցիալական կյանքը, ժողովրդական սովորույթները:

Ահա հետաքրքրական որոշ օրինակներ.

Dostlar alış verişte görsün (ընկերներս ինձ առևտրի մեջ թող

տեսնեն) (նշանակում է նպատակը գործը չէ, այլ՝ ցույց տալը, թե գործ է արվում) [19]:

Մի օր Հոջա Նասրեդդինը մեկ ակչեով ութ ձու է գնում, այնուհետև մեկ ակչեով վաճառում է ինը ձու: Տեսնողները զարմացած խնդրում են բացատրել իր արարքը, նա պատասխանում է. «Կարևորն այն է, որ ընկերներս տեսնեն՝ առևտրի մեջ եմ»:

Հաջորդը Köpekler serbest, taşlar bağı (Շները՝ ազատ, քարերը՝ կապված) դարձվածքն է (նշանակում է երկրում անօրինություն և անպատժելիություն է տիրում) [20]: Ծագման պատմությունը հետևյալն է. նախկինում Ստամբուլը հայտնի էր իր թափառական շներով: Մի երեկո Բեքրի Մուստաֆան գինետնից տուն վերադառնալիս հանդիպում է թափառող շների ոհմակիին: Շներից պաշտպանվելու համար նա փորձում է մի քար վերցնել, բայց գետնին քարի ոչ մի կտոր չի գտնում և զայրացած ասում է. «Մա ի՞նչ երկիր է. շներն ազատ են արձակված, իսկ քարերը կապված են»:

զ) Դարձվածքներ, որոնք վերցված են հասարակության ամենօրյա կենսափորձից, մարդկային հարաբերություններից, թուրք ժողովրդի ավանդություններից և սովորույթներից:

Ահա համապատասխան օրինակներ.

Gözden sürmeyi çekmek (աչքից սուրմա փախցնել) (նշանակում է գողության մեջ վարպետ լինել) [21],

Kabak tadı vermek (համ տալ) (նշանակում է նույն բանն անընդհատ պատմելով ձանձրացնել) [22]:

Վերը նշված օրինակներից հստակ երևում է, որ լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլ նաև հայելի է, որի մեջ երևում են տվյալ լեզուն կրողների ազգային մտածելակերպն ու մշակույթը:

Դարձվածքները, լինելով լեզուն կրող ժողովրդի ազգամշակութային յուրահատկությունների կրողը, սերնդեսերունդ փոխանցվելով, խտացրած ձևով արտացոլում են լեզուն կրող ժողովրդի պատմությունը, հասարակական փորձը, կենցաղն ու բարոյական հիմքերը:

Դարձվածքների ճիշտ և տեղին կիրառումը լեզվին հա-

դորդում է անկրկնելի յուրօրինակություն, ճշգրտություն և արտահայտչականություն:

Դարձվածաբանությունը բառագիտության բաժիններից մեկն է: Ինչպես գիտենք, բառագիտությունը լեզվաբանական գիտաճյուղ է, որն ուսումնասիրում է լեզվի բառապաշարը, բառային միավորները՝ բառերը, բառի արժեքով կիրառվող կայուն կապակցությունները: Բառագիտությունը սահմանում է բառը, քննում բառիմաստները, իմաստափոխության եղանակները, կայուն բառակապակցությունների ու դարձվածքների գործածության տեղն ու դրանց իմաստային նրբերանգները, զատում բառերն ըստ տեսակների, տալիս բառի ծագման ու նրա պատմական զարգացման ճանապարհի նկարագիրը, սահմանազատում բառագործածության ոճական ոլորտները և այլն: Լինելով բառագիտության ուսումնասիրման առարկա՝ դարձվածքները, այնուամենայնիվ, ուսումնասիրվում են նաև որպես քերականական իրողություններ, քանի որ ունեն քերականական կառուցվածք:

Ըստ քերականական կառուցվածքի՝ թուրքերենի դարձվածքները կարելի է բաժանել երեք խմբի՝

բայական,

անվանական,

հաղորդակցական:

Բայական դարձվածքները կազմված են երկու կամ երեք բառերից, սակայն գերակշռող դերը պատկանում է բային:

Ներկայացնում ենք բայական դարձվածքների օրինակներ.

Açık olmak (բաց լինել) (նշանակում է բարյացակամ, պարզ լինել) [23],

Ağır yapmak (բերան անել) (նշանակում է ինչ-որ բան համոզելու համար պատմել՝ գործածելով չափազանցություններ) [24],

Adam yerine koymamak (նշանակում է մարդու տեղ դնել) [25]:

Անվանական դարձվածքները կազմված են բառակապակցություններից, որտեղ բացակայում է մոդալությունը:

Անվանական դարձվածքների օրինակներ.

Dar boğaz (նեղ կոկորդ) (նշանակում է մեծ դժվարություններ) [26],

Abbas yolcu (Աբբասը ճանապարհորդ է) (նշանակում է մարդ, որը միշտ պատրաստ է օգնության հասնել) [27]:

Հաղորդակցական դարձվածքներն արտահայտվում են պատկերավոր նախադասությունների միջոցով, որոնցում բայը կարող է փոփոխվել՝ ըստ ժամանակի և սեռի:

Հաղորդակցական դարձվածքների օրինակներ.

Ah edip eh işitmek (ահ ասել, էհ լսել),

Ah edip eh işitti (ահ ասաց, էհ լսեց),

Ah edilip eh işitilir (ահ ասվում է, էհ՝ լսվում):

Քանի որ դերբայական դարձվածքները դիտարկվում են որպես կայուն, հաստատուն բառակապակցություններ, հարկ է նշել, որ նրանց բնորոշ է կառուցվածքային կայունությունը և բաղադրիչների անփոփոխելիությունը:

Օրինակներ՝

Göze girmek (աչք մտնել) [28],

Kulağa girmek (ականջ մտնել) [29],

Burna girmek (քիթ մտնել) [30]:

Կարևոր է հիշել, որ թուրքերեն դարձվածքներում խիստ պահպանվում է բաղադրիչների շարադասությունը:

Օրինակներ՝

Halep orada arşin burada (Հալեպն այնտեղ է, արշինը՝ այստեղ) [31]:

Ի տարբերություն ազատ բառակապակցությունների՝ դարձվածքը կայուն կապակցություն է և չի կարող կիրառվել իր բաղադրիչ անդամների շարադասության փոխվելու դեպքում, քանի որ կկորցնի իր դարձվածքային իմաստը:

Ժամանակակից թուրքերենում պահպանվել են մի շարք դարձվածքներ, որոնք, իրենց վրա կրելով ժամանակի և տարբեր բարբառների ազդեցությունը, ենթարկվել են որոշակի փոփոխությունների, բայց պահպանել են իրենց նախնական իմաստը:

Ներկայացնենք համապատասխան օրինակներ.

Kötü gözle bakmak (վատ աչքով նայել) [32],

Fena gözle bakmak (վատ աչքով նայել),

Kızım sana söylüyorum gelinim sen dinle (աղջի՛կս, քեզ եմ
ասում, հա՛րս, դու լսիր) [33],

Kızım sana söylüyorum gelinim sen işit (աղջի՛կս, քեզ եմ
ասում, հա՛րս, դու լսիր),

Kızım sana söylüyorum gelinim sen anla (աղջի՛կս, քեզ եմ
ասում, հա՛րս, դու հասկացիր):

Դարձվածքների մասին խոսելիս չի կարելի չանդրադառնալ նրանց՝ բնագրից մեկ այլ լեզվի թարգմանության խնդիրների: Միշտ չէ, որ հնարավոր է դարձվածքները ստույգ թարգմանել: Նրանց թարգմանությունը լինում է դարձվածքային և ոչ դարձվածքային:

Շատ կարևոր է դարձվածքների ճիշտ թարգմանությունը հատկապես գեղարվեստական ստեղծագործություններ թարգմանելիս, քանի որ նրանք հանդիսանում են հեղինակի ոճի ամենակարևոր բնորոշիչներից մեկը:

Դարձվածքները մի լեզվից մյուսը կարող են թարգմանվել մի քանի եղանակով.

Լիարժեք էկվիվալենտ դարձվածքների միջոցով, երբ թարգմանված լեզվում պահպանվում են սովյալ դարձվածքի բոլոր առանձնահատկությունները՝ թե՛ ոճական, թե՛ բառային, թե՛ իմաստային:

Օրինակներ՝

Kedi ile köpek gibi olmak (շուն ու կատվի պես լինել),

Alın açık olmak (ճակատը բաց լինել) [34],

Ateş pahası (կրակի գին) [35],

Mumla aramak (մումով փնտրել) [36]:

Թերի կամ մասնակի էկվիվալենտների միջոցով, երբ դրանք արտահայտում են բնագիր դարձվածքի նույն իմաստը, և պահպանված է պատկերային կողմը, սակայն բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը տարբերվում են կա՛մ քերականական, կա՛մ շարահյուսական, կա՛մ ձևաբանական առանձնահատկություններով:

Օրինակներ՝

Çayı görmeden paçaları sıvamak (գետը չտեսած քղանցքները քշտել) (նշանակությունը՝ ջուրը չտեսած կոշիկները հանել) [37],

Kirk dereden su getirmek (քառասուն գետից ջուր բերել) (նշանակությունը՝ յոթ աղբյուրից ջուր խմել) [38],

Keçiyi sudan çıkarmak (այծը ջրից հանել) (նշանակությունը՝ էշը ցեխից հանել) [39]:

Դարձվածքային անալոգների/համանունների միջոցով, երբ դրանք արտահայտում են բնագրի դարձվածքի նույն իմաստը, սակայն պատկերային այլ դարձվածքով, որ առկա է թարգմանվող լեզվում: Դրանք բնագրի դարձվածքներից կարող են տարբերվել բաղադրիչների թե՛ քերականական, թե՛ շարահյուսական, թե՛ ձևաբանական առանձնահատկություններով:

Օրինակներ՝

Üsküdar'da sabah oldu (Ուսկյուդարում առավոտ դարձավ) (նշանակությունը՝ բանը բանից անցավ) [40],

Etekleri zil çalmak (քղանցքները զնգզնգալ) (նշանակությունը՝ երջանկությունից ճախրել) [41]:

Բառացի թարգմանության կամ դարձվածքի իմաստի վերարտադրումը ոչ դարձվածքի միջոցով, երբ թարգմանվող լեզվում չկա տվյալ դարձվածքի համարժեքը կամ համանունը:

Օրինակ՝

Halep orada arşin burada (Հալեպն այնտեղ է, արշինը՝ այստեղ) (նշանակությունը՝ դատարկ տեղը գլուխ գովել):

Թուրքերեն դարձվածքները ժողովրդի կենսափորձի, աշխարհայացքի և մտածելակերպի արգասիքն են: Նրանց բովանդակությունն արտացոլում է թուրք ժողովրդի կյանքի սարբեր կողմերը, բնութագրում է նրանց խելամիտ և անմիտ գործողությունները, հաջողություններն ու անհաջողությունները, նկարագրում մարդկային հարաբերությունները, զգացմունքները: Դրանք օգնում են ավելի պատկերավոր ձևով արտահայտել խրախուսանքը և քամահրանքը, բարյացակամությունը և անբարյացակամությունը, թշնամությունը և հաշտությունը, վրեժխնդրությունը և դատապարտումը:

Այսպիսով, կարող ենք հաստատել, որ դարձվածքները թուրքերենում իմաստաբանորեն կապված ոչ մոդելավորված բառակապակցություններ են: Նման արտահայտությունները

լեզվի մեջ ոչ թե ստեղծվում են, այլ վերարտադրվում են պատրաստի վիճակում: Նրանց բնորոշ են բազմիմաստությունը և համանունությունը, այսինքն՝ նույն դարձվածքը միևնույն ժամանակ կարող է լինել և՛ կայուն, և՛ ազատ: Դարձվածքների այս առանձնահատկությամբ էլ պայմանավորված են թարգմանության ժամանակ առկա բարդությունները:

Հաճախ տարբեր լեզուներում իմաստով համընկնող դարձվածքներն ունենում են հուզական և ոճաբանական տարբեր երանգներ՝ կախված տվյալ լեզուներով խոսող մարդկանց ազգամշակութային առանձնահատկություններից: Սակայն, հարկ է ընդգծել, որ թուրքերեն դարձվածքների հայերեն համարժեքները՝ ի տարբերություն ռուսերենի կամ անգլերենի, շատ ավելի հաճախադեպ են: Սա հետևանք է այն հզոր փոխազդեցության, որ դարեր շարունակ կողք կողքի ապրող ժողովուրդները թողնում են ոչ միայն միմյանց կենցաղի, այլ նաև լեզվի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Yakup Kavas*. Maymun Gözünü açtı. Zambak, 2005, 21:
2. Նույն տեղում, 15:
3. *Н.А.Баскаков*. Турецко-Русский словарь. М. 1976, 606:
4. *Yakup Kavas*. Maymun Gözünü açtı. Zambak, 2005, 22:
5. Նույն տեղում, 25:
6. *Çizmeciler Osman*. Ünlü Deyimler ve Öyküleri.İstanbul, 1980, 16:
7. Նույն տեղում, 153:
8. Նույն տեղում, 168:
9. *Yakup Kavas*. Maymun Gözünü açtı. Zambak, 2005, 16:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում, 23:
12. Նույն տեղում, 42:
13. Նույն տեղում, 77:
14. *Н.П. Сидорина*. Турецко-русский словарь пословиц и поговорок. М. 2006, 63:

15. *Yakup Kavas*. Maymun Gözünü açtı. Zambak, 2005, 63:
16. Նույն տեղում, 17:
17. Նույն տեղում, 39:
18. *Н.А. Баскаков*. Турецко-Русский словарь. М. 1976, 74:
19. *Yakup Kavas*. Maymun Gözünü açtı. Zambak, 2005, 86:
20. *Tokmakçioğlu Erdoğan*. En güzel Fıkralarıyla Bekri Mustafa. İstanbul, 1983, 152:
21. *Çizmeciler Osman*. Ünlü Deyimler ve Öyküleri. İstanbul, 1980, 37:
22. *Н.А. Баскаков*. Турецко-Русский словарь. М. 1976, 490:
23. Նույն տեղում, 23:
24. Նույն տեղում, 31:
25. *Çizmeciler Osman*. Ünlü Deyimler ve Öyküleri. İstanbul, 1980, 26:
26. Նույն տեղում, 41:
27. *Yakup Kavas*. Maymun Gözünü açtı. Zambak, 2005, 23:
28. *Н.А. Баскаков*. Турецко-Русский словарь. Москва, 1976, էջ 357:
29. Նույն տեղում, 571:
30. Նույն տեղում, 156:
31. *Yakup Kavas*. Maymun Gözünü açtı. Zambak, 2005, 111:
32. Նույն տեղում, 35:
33. *Yakup Kavas*. Maymun Gözünü açtı. Zambak, 2005, 197:
34. Նույն տեղում, 38:
35. Նույն տեղում, 43:
36. Նույն տեղում, 168:
37. Նույն տեղում, 69:
38. Նույն տեղում, 147:
39. Նույն տեղում, 139:
40. Նույն տեղում, 212:
41. *Сидорина Н.П.* Турецко-русский словарь пословиц и поговорок. М. 2006. 149:

ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ В ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ И ИХ ПРОИСХОЖДЕНИЕ

АННОТАЦИЯ

Благодаря использованию фразеологических единиц турецкий язык становится более выразительным и ярким. Исходя из семантических особенностей, фразеологические единицы турецкого языка могут быть разделены на две группы:

а) фразеологические единицы, в которых смысл непосредственно выражается через компоненты;

б) фразеологические единицы, в которых смысл выражается опосредованно. Большинство турецких фразеологических единиц непосредственно связаны с историей страны. Пословицы, поговорки отражают мировоззрение, традиции и культурные особенности турецкого народа.

В зависимости от их происхождения эти единицы можно разделить на следующие группы:

а) фразеологизмы, которые появились в результате исторических событий;

б) фразеологизмы, которые приходят из популярных народных сказок о таких персонажах, как Ходжа Насреддин, Инджил Чавуш, Бекри Мустафа и т.д.;

в) фразеологизмы, связанные с традициями, обычаями и повседневным опытом турецкого народа.

Ключевые слова: *турецкие фразеологические единицы, Якуб Каваси, этимология, национальные-культурные особенности, Ходжа Насреддин, Инджил Чавуш, Бекри Мустафа.*

ON TURKISH PHRASEOLOGIES AND THEIR ORIGIN

SUMMARY

Proverbs, sayings, and phraseologies reflect the worldview, traditions and the cultural peculiarities of the nation. Due to the usage of phraseological units, languages become more expressive and vivid. Like any other Oriental language, Turkish is also rich in phraseological units. According to their semantic peculiarities, they may be divided into two groups:

a) phraseological units where the meaning is directly expressed by the components,

b) phraseological units where the meaning is expressed indirectly.

Most of them refer to early historical events, that is why sometimes it is difficult to understand their meaning if one does not know the history of Turkey.

According to their origin, Turkish phraseological units may be classified into the following groups:

- a) ones that appeared as the result of historical events,*
- b) ones that originate from popular folk stories about such characters as Hoja Nassredin, Injil Chavush, Bekri Mustafa, etc.;*
- c) ones that are connected with the traditions, customs and everyday experience of Turkish people.*

Keywords: *Turkish phraseological units, Jaub Kavasi, etymology, national and cultural peculiarities, Hoja Nassredin, Injil Chavush, Bekri Mustafa.*

ԱԲԽԱԶԻԱՅԻ 1917–1921 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
«ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲՈՒՀԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Բ.Վ. Մախլյան

ԱՍՓՈՓՈՒՄ

Գիտահետազոտական հոդվածը հասցեագրված է դասախոս տարածաշրջանագետներին և հանդիսանում է առավել հարմարեցված ուսումնական նյութ լսարանային պարապմունքների համար: Պարունակում է պատմական այն իրադարձությունները և երևույթները, որոնց իմացությունը ոչ պակաս կարևոր է բանիմաց և խելացի տարածաշրջանային փորձագետներ պատրաստելու համար: Հաշվի առնելով Աբխազիայի XX դարի քաղաքական պատմության փուլերը՝ հոդվածը պատկերացում է տալիս հիմնական հասկացությունների, պատճառահետևանքային կապերի և գործոնների մասին: Ուսումնասիրությունն ունի կիրառական նշանակություն և ներառում է գործնական խորհուրդներ, որոնք ոչ միայն բացահայտում են առանձին բաժինների բովանդակությունը, այլև սահմանում են դրանց բաշխման առավել ռացիոնալ տարբերակներ՝ պահանջված ուսումնական խնդիրները ավելի խորը մշակելու համար: Հոդվածի յուրաքանչյուր բաժինը պարունակում է կարճ եզրակացություն, որը հնարավորություն է տալիս տրամաբանորեն անցնել հերթական ուսուցողական խնդրի լուծմանը: Յուրաքանչյուր խնդիր շարադրված է համաձայն մանկավարժական արդի պահանջներին: Հոդվածը հենվում է մի շարք գիտական ուսումնասիրությունների վրա, որոնք միննույն ժամանակ հանդես են գալիս առաջադրվող ուսումնական գրականության դերում:

Հիմնաբառեր՝ Աբխազիա, պատմություն, քաղաքականություն, ինքնորոշում, անկախություն, ինքնավարություն, սահմանադրություն:

Կովկասի երկրների և ժողովուրդների նորագույն պատմության ուսումնասիրությունն արդի շրջանում առանձնակի

նշանակություն ունի մեր հայրենի գիտական և բուհական հասարակայնության համար: Այս ասպարեզում վերջերս կարևորվեց Արխագիայի քաղաքական պատմության դասավանդման խնդիրը, որը, անշուշտ, միշտ էլ իր ուրույն արժեքն է ունեցել կովկասագիտության գիտակարգի ծիրում: Գաղտնիք չէ, որ մեր տարածաշրջանային արդի զարգացումները հրամայական են դարձրել Վրաստանի և Արխագիայի պատմագիտությունը միմյանցից առանձնացված դիտելու պահանջը: Սակայն սա, այնուամենայնիվ, չի նշանակում, թե Արխագիայի հետ առնչվող հարցերը պետք է դուրս մղվեն Վրաստանի XX դարի պատմության համատեքստից: Աշխարհաքաղաքական վերջին տեղաշարժերը հնարավորություն ընձեռեցին պատմագիտական միանգամայն նոր և ինքնուրույն հայեցակարգ մշակելու Արխագիայի նորագույն շրջանի քաղաքական պատմության համար: Այդ հայեցակարգը նաև պետք է ծառայի որպես բուհական դասընթացի հենք և օժանդակ լինի դասախոսին մշակված թեման պահանջված մակարդակով ուսանելու համար:

Դասավանդվող թեման նպատակահարմար է ներկայացնել փուլային բաժանումներով՝ ավելի հստակեցնելով Արխագիայի կարգավիճակի ու նորագույն ժամանակաշրջանում արխագ-վրացական փոխհարաբերությունների հիմնախնդիրները: Արխագիայի կարգավիճակի հիմնահարցի զարգացումը կարելի է բաժանել երեք հիմնական ժամանակաշրջանի: Առաջինը 1917–1921 թվականներն են, երբ ձևավորվում էին Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության սահմանները, և Արխագիան ընդգրկվել էր նրա կազմի մեջ՝ ինքնավարությունից օգտվելու նախապայմանով: Երկրորդը 1921-ի մարտից մինչև 1985 թվականը ընկած ժամանակահատվածն է: Այդ ընթացքում Արխագիան նախ հռչակվել էր ինքնուրույն, սակայն այնուհետև ստացել էր ինքնավար հանրապետության կարգավիճակ Խորհրդային Վրաստանի կազմում: Դրա վերանայման հարցը ժամանակ առ ժամանակ առաջ էր քաշվում դժգոհ արխագ հասարակայնության կողմից: Երրորդը 1985 թվականից մինչև մեր օրերն է, այսինքն՝ «Վերակառուցման»,

ԽՍՀՄ-ի կազմալուծման, Վրաստանի անկախության հռչակման հետևանքով Աբխազիայի կարգավիճակի վերանայման փորձը և արդյունքում վրաց-աբխազական զինված հակամարտության առաջացումը: Ծավալված գործընթացների վախճանը դարձան 2008 թվականի օգոստոսյան իրադարձությունները և Ռուսաստանի, ինչպես նաև աշխարհի մի շարք այլ երկրների կողմից Աբխազիայի անկախության ճանաչումը:

Թեման ուսանողների կողմից հիմնավոր յուրացնելու նպատակով և հետագայում խորացնելու համար հարկ է բնութագրել հիմնախնդրի պատմության սկզբնաղբյուրները և գնահատել հրապարակի վրա եղած ուսումնասիրությունները: Անհրաժեշտ է ունկնդրի ուշադրությունը բևեռել կատարված և ներկայումս էլ առկա պատմական կեղծիքների վրա, ինչը թույլ կտա ավելի ամբողջական պատկերացում կազմել խնդրի վերաբերյալ: Այս կապակցությամբ հարկ է առանձնահատուկ նշել, որ հետազոտողները ցայսօր չեն մշակել խնդրո առարկա պատմագիտական անաչառ հայեցակարգ:

Աբխազիայի քաղաքական պատմության ուսումնասիրման խնդիրներին, այդ թվում նաև 1917–1921 թվականների նրա կարգավիճակի հիմնահարցին և աբխազ-վրացական հարաբերություններին անդրադարձող աշխատությունները հաճախ կրում են միակողմանի, միտումնավոր և հակասական բնույթ, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում թեմայի համարժեք դասավանդման համար: Հետազոտությունների մեծ մասը, կենտրոնացված լինելով առանձին հարցերի քննության վրա, արտահայտում է կա՛մ վրաց, կա՛մ էլ աբխազ պատմաբանների հակադիր տեսակետները, իսկ որոշ դեպքերում բանավիճական խնդիրները գերակայում են գիտական պահանջների նկատմամբ [1]:

Ստեղծված փակուղին հաղթահարելու համար առավել նպատակահարմար է առկա պատմագիտական նյութը ներկայացնել համակարգված ձևով: Նախ և առաջ, հարկ է տալ Կովկասի երկրների և ժողովուրդների նորագույն պատմության բնութագիրը և այդ խորքի վրա պատկերել Աբխազիայում ու նրա շուրջ ծավալված գործընթացները: Այդ բոլորը

պետք է հիմնավորել համոզիչ փաստերով և որոշակի իրավիճակների վերլուծությամբ: Ասածը վերաբերում է Արխագիայի պատմության բախտորոշ շրջափուլերից մեկին՝ 1917–1921 թվականներին: Կարծում ենք՝ բուհական դասընթացում պետք է հիմք ընդունել պատմագիտական հետևյալ իմաստային հղացքը և ժամանակային պարբերացումը:

Սուաջին. Արխագիայի ինքնորոշման ծրագրերը (1917թ. փետրվար – 1918թ. մայիս): Այս շրջափուլը պետք է ներկայացնել որպես կայսերական լծից ազատագրված ժողովուրդների ինքնորոշման և ազգային պետությունների ձևավորման գործընթացների սկզբնավորման շրջան: Այստեղ կա անհրաժեշտություն ընդգծելու և հիմնավորելու այդ ազատագրական պայքարի օրինական սկիզբն ու հետագա ընթացքը: Այդ փուլի մասին խոսելիս պետք է փաստել նաև, որ Ռուսական կայսրության անկումից հետո նրա ամբողջ տարածքում, այդ թվում՝ Այսրկովկասում, լուծման հրատապ հարց է դառնում ազգային խնդիրը: Վրացական ազգային շարժման արմատական մասը հանդես եկավ երկրամասի վրացաբնակ շրջաններին քաղաքական ինքնորոշման իրավունք տալու օգտին: 1917 թվականի ապրիլի կեսին վրացական քաղաքական հոսանքները համաձայնության եկան ապագա Վրաստանի ենթադրյալ սահմանների շուրջ՝ նրա հնարավոր տարածքը բաժանելով «անվիճելի» և «վիճարկվող» շրջանների: Վերջիններիս ընդգրկումը պետք է որոշվեր տեղի բնակչության հանրաքվեի միջոցով: Այս առումով Արխագիան դասվեց «վիճարկվող» շրջանների կարգին: Արխագ գործիչները պահանջում էին Վրաստանից անջատ ազգային ինքնորոշում [2]: 1917 թվականի նոյեմբերի 8-ին գումարված աբխազական ժողովրդի համագումարը ստեղծեց Աբխազական ժողովրդական խորհուրդ (ԱԺԽ), որը, արտահայտելով համագումարի կամքը, շտապեց հանդես գալ կազակների և լեռնականների՝ Հարավ-Արևելյան Միությանն անդամակցելու օգտին: Վրացական քաղաքական շրջանակները բողոքարկեցին այս Միության կազմին Արխագիայի ներգրավման հնարավորությունը: Սակայն 1918 թվականի փետրվարի 9-ին ԱԺԽ-ն և Վրացական ազգային խոր-

հուրդը մի համաձայնագիր կնքեցին, ուր ասված է, որ Աբխազիայի քաղաքական կառուցվածքի ապագա ձևը պետք է մշակվի այս միավորի սահմանադիր ժողովում՝ ելնելով ինքնորոշման սկզբունքից [3]: Աբխազները ցանկանում էին հասնել քաղաքական ինքնուրույնության՝ միաժամանակ ունենալով ապագա Վրաստանի հետ միայն բարիդրացիական հարաբերություններ՝ որպես հավասար հարևանի:

Ավանդաբար աբխազական ազնվականությունն ուներ մեծ հեղինակություն և, հետևաբար, գործուն ազդեցություն ամբողջ աբխազ հասարակությունում: Նրա ներսում սոցիալական հակասությունները գրեթե բացակայում էին՝ աբխազների սակավության և նրաց պատկանող մշակելի հողի բավարար լինելու հետևանքով: Աբխազ գյուղացիության մեծամասնությունը երկրագործությամբ չէր էլ զբաղվում և գերազանցապես անասնապահ էր: Ընդհակառակը, բախում կար աբխազ կավածատերերի և հողագուրկ մեզրել գյուղացիների միջև: Օգտրվելով հեղափոխությունից՝ վերջիններս հրաժարվում էին հողավարձը մուծել: Ազգամիջյան հարաբերությունները ավելի սրվեցին, երբ տարածվեց հողի վերաբաշխման մասին սոցիալիստական քարոզչությունը: Մի կողմից բոլշևիկները, մյուս կողմից վրաց «մենշևիկ» սոցիալ-դեմոկրատները փորձում էին հասարակական պայքար հրահրել աբխազ ժողովրդի ներսում: Դրա դիմաց աբխազ մտավորականության սակավաթիվ ներկայացուցիչները մարտնչում էին հանուն ազգային գաղափարի շուրջ իրենց ցեղակիցների բոլոր խավերի միասնության: Սակայն դա հաջողվեց աբխազաբնակ գավառներից միայն մեկում՝ Կոդորիում: Աբխազների քաղաքական գիտակցությունը պատրաստ չէր ազգի առաջ ծառայած խնդիրների լուծմանը: Զիրխուա գյուղում և Մչիշտա գետի ափին կայացած Գուդաուտայի գավառի աբխազ գյուղացիության հավաքները ողջունեցին բոլշևիկների կարգախոսները: Ի հակադրություն դրա՝ աբխազ ազնվականությունը և մտավորականության մի մասն ընտրել էին հյուսիսկովկասյան լեռնականների հետ միության ծրագիրը: Լեռնականների առաջնորդները խոստանում էին չմիջամտել Աբխազիայի ներքին գործերին: Սակայն

Ռուսաստանի հարավում քաղաքացիական պատերազմի թեժացման պատճառով Համախմբված լեռնականների միության (ՍՕԳԿ) կառավարության իշխանության տարածումը Արխագիայի վրա այլևս իրական չէր:

Մինչդեռ երկրամասի մեզբեղ ազգաբնակչությունը ընտրել էր վրացամետ ուղին. Վրաստանից ծավալվում էր հեղափոխական քարոզչություն, որը խոստանում էր հող: Հողագուրկ մեզբեղ կապալագործներին սիրաշահելու քաղաքականություն էին վարում նաև տեղի բոլշևիկները: Վերջիններիս հաջողվեց հրապուրիչ կարգախոսներով գայթակղել մեզբեղ գյուղացիության մի մասը ոչ միայն Մուխոմի շրջանում, այլ նաև դրացի Ջուգդիդիի գավառում: Առաջացավ Օսմանյան կայսրության տարածքում մի ժամանակ ապաստան գտած վտարանդի արխագ-մուհաջիրների՝ հազարավոր հետնորդների հայրենադարձության ծրագիրը՝ որպես հակակշիռ մեզբեղներին: Տարածվել էին լուրեր, թե նրանց վերաբնակեցման համար արխագներն անհրաժեշտ են գտնում վտարել մեզբեղներին Արխագիայից: Այս հողի վրա սրվեցին ազգամիջյան հարաբերությունները:

Մուհաջիրների վերադարձի գաղափարը թելադրում էր ամուր կապ հաստատել Թուրքիայի հետ: Արխագների թուրքամետությունն ամրապնդվում էր նաև կովկասյան լեռնականների մեջ նույն տրամադրությունների ծավալմանը համընթաց [4]: Դրանք ավանդաբար տոգորված էին համախուլամական քարոզչությամբ և անմիջական կապ էին հաստատել Օսմանյան Թուրքիայում գտնվող մեծ հյուսիսկովկասյան համայնքի՝ «չերքեզների» հետ:

1917 թվականի վերջին – 1918 թվականի սկզբին վրացական քաղաքական շրջանակները պայքար սկսեցին ՍՕԳԿ-ի կողմից ծրագրավորվող պետության մեջ Արխագիայի ընդգրկման դեմ: Նրանք նպատակ ունեին նաև զերծ պահելու Մուխոմի շրջանի մեզբեղներին արխագների և նրանց դաշնակից լեռնականների հնարավոր ոտնձգություններից: Վրաց գործիչներն արխագներին առաջարկում էին լեռնականների փոխարեն դաշինքի մեջ մտնել մեզբեղների հետ: Նրանք հույս էին

փայփայում, որ դրա շնորհիվ երկրամասում կունենան լուրջ ազդեցություն և դերակատարություն: Տեղի մեզբեւներն ավելի հեռու էին գնում՝ հայտարարելով, որ ցանկություն ունեն Արխազիան ընդգրկելու ապագա Վրաստանի կազմի մեջ: Դա տեղիք տվեց արխազների հակավրացական տրամադրությունների խորացմանը: Հարկ է նշել, որ այսպիսով քաղաքական պայքարը Արխազիայում ձեռք էր բերում նաև ազգային երանգավորում, ինչը հետագայում մեծ չարիքների պատճառ հանդիսացավ:

Բուհական դասավանդման ընթացքում Արխազիայի 1917–1921 թվականների քաղաքական պատմության առաջին դրվագին անդրադառնալիս անպայմանորեն պետք է մատնանշել, որ Այսրկովկասն անկախ հռչակելու պահին Սուխումի շրջանի տարածքը չէր վերահսկվում Մեյմի նորաստեղծ կառավարության կողմից: 1918 թվականի ապրիլի 8-ին Արխազիայում՝ բացառությամբ Կոդորիի (Օչամչիրայի) գավառի, հաստատվեցին խորհրդային կարգեր, սակայն առանց պետականության վերականգնման: Սուխումի Զինհեղկոմն իրեն չհռչակեց որպես ազգային-պետական մարմին: ՌՍՖՍՀ-ի կազմում Կուրանա-Սևծովյան հանրապետության առաջացումից հետո ՋՀԿ-ն դիմել էր Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար) գտնվող խորհրդային իշխանություններին՝ առաջարկելով իրեն կցել Սուխումի շրջանը: Ուստի արխազների մեծամասնությունը հրաժարվեց բոլշևիկյան կուսակցությանն աջակցելուց: Արխազ ժողովուրդը, որը դարերով ապրում էր յուրահատուկ սովորույթներով և ղեկավարվում էր ուրույն ազգային իր ավանդույթներով, չգայթակղվեց բոլշևիկների հրապուրիչ կարգախոսներով: ԱժԽ-ն ցրվել էր, իսկ նրա անդամների որոշ մասը ձերբակալվեց:

Բոլշևիկյան վտանգը (որը դիտվում էր իբրև վերաբաշխում՝ հոգուտ տեղի մեզբեւների) խթանեց արխազ իշխանների թուրքամետ դիրքորոշումը: Արխազ կավածատեր ազնվականությունը պատրանք էր տաձում, թե օսմանների հովանավորության շնորհիվ կկարողանա պահպանել իր հողային սեփականությունը: Նրանց ընդդեմ բոլշևիկների զինուժ խնդրելու

ծրագիր էր մշակում: Եվ գործն իրեն սպասել չսովեց, քանզի լիովին համապատասխանում էր թուրք զավթիչների ծավալապաշտական նկրտումներին: Նրանք արդեն որոշել էին գորք ուղարկել Արխագիան զավթելու նպատակով: Այդ վտանգը ստիպեց վրացական կողմին թուրքերից մեկ քայլ առաջ ընկնել և շուտափույթ գրավել Մուխումը:

1918թ. հունիս-օգոստոս ամիսներին Արխագիայի Կողո-րիի գավառում արդեն դիրքավորվել էր ասկյարների մի զորա-խումբ, ինչը մեծ վրդովմունք առաջացրեց Վրաստանի քաղա-քական շրջանակներում և ակտիվ քննարկման առարկա դար-ձավ վրաց-գերմանական և գերմանա-թուրքական բանակցու-թյուններում: Թուրքական կողմը կտրականապես մերժեց Ար-խագիայից իր զորամասի դուրս բերման մասին գերմանացի բանագնացների առաջարկը: Բարեբախտաբար պաշտոնա-կան Թիֆլիսի համար դեսանտն ի վերջո պարտության մատնը-վեց վրաց և գերման զինվորականների, ինչպես նաև վրա հա-սած տեղի մեզրել և հույն աշխարհագորայինների միահամուռ ջանքերի շնորհիվ [5]:

Երրորդ շրջափուլն ընդգրկում է Արխագիայում Վրաս-տանի կառավարության գերակայության հաստատումը և վրաց-արխագական դաշնագրերի կնքումը: 1918թ. մայիսի 26-ին հռչակված Վրաստանի Դեմոկրատական Հանրապետու-թյունը չունեք միջազգայնորեն համաձայնեցված սահմաններ և վրացաբնակ գավառներից բացի հավակնում էր նաև կազ-մալուծված Ռուսական Կայսրության մի շարք հարևան տա-րածքների, այդ թվում՝ Սև ծովի ափին գտնվող Մուխումի, Գագրայի և Սոչիի շրջանների նկատմամբ:

Մինչև խորհրդային կարգերի վերացումը (1918թ. մայիսի 17-ը) Արխագիան համարվում էր Խորհրդային Ռուսաստանի մաս:

Վրաստանի անկախության հռչակման պահին Արխա-գիան կառավարվում էր Թիֆլիսում գտնվող վրաց ազգային խորհրդին ենթակա ռազմական ուժի կողմից, հետևաբար վրացական կառավարությունը փաստացի ձեռք բերեց լուրջ դերակատարություն երկրամասի ապագա կարգավիճակի

որոշման հարցում: Վրացական կառավարությունն, ընդունելով Գերմանիայի հովանավորությունը, նրա պաշտոնական ներկայացուցիչներից ստացավ Աբխազիայի նկատմամբ իր իրավունքի ճանաչում [6]: 1918 թվականի հունիսի 8–11-ին Թիֆլիսում ձեռք բերած պայմանավորվածությունների համաձայն՝ Աբխազական ժողովրդական խորհուրդը մեկ ազգության հասարակաքաղաքական կազմակերպությունից պետք է վերակազմավորվեր երկրամասի կառավարման գերագույն մարմնի, սակայն իրականում ստացավ ներկայացուցչական-խորհրդակցական կառույցի գործառույթ: Վրաց կառավարությունը փաստորեն կոպտորեն խախտեց աբխազ բանագնացների հետ ստորագրված դաշինքի պայմանները: Եվ 1918թ. հունիսի 18-ին նա Սուխումի շրջանը վերածեց իրեն ենթակա զինվորական գեներալ-նահանգապետության: Այսպիսով՝ աբխազներին չհաջողվեց ստեղծել թե՛ ազգային կառավարություն, թե՛ սեփական վարչակազմ:

ԱԺԽ-ի անդամների մի մասը հույս ուներ հրավիրելու երկրամասի Մահմանադիր (Ազգային) ժողով և վերանայելու 1918թ. հունիսի 11-ի դաշնագիրը: Մինչդեռ Վրաստանի կառավարական ներկայացուցիչները վարում էին այդ թույլ չտալու քաղաքականությունը: Նրանք ցանկանում էին Աբխազիայում ստեղծել ներկայացուցչական մի թույլ մարմին և ի լուր աշխարհի հանրաձայնել սույն երկրամասի ազգաբնակչության Վրաստանի կազմում մնալու «ազատ կամքի» մասին: Այլ խոսքով՝ պաշտոնական Թիֆլիսը ցանկանում էր Աբխազիայում տեսնել՝ նրա լիիրավ խորհրդարանի փոխարեն, զեմստվոյի մակարդակի մի մարմին, որը պետք է զբաղվեր բացառապես տեղական ինքնակառավարման խնդիրներով: Այսպիսով՝ վրաց կառավարությունը շուտով մոռացության մատնեց «հունիսի 11-ի դաշնագիրը», որին, սակայն, ընդդիմանում էր ԱԺԽ-ի անդամների նշանավոր մասը:

Անկայուն պահերին աճում էր Սուխումի շրջանի ոչ աբխազական բնակչության նշանակությունը և կարևորվում նրա՝ վրաց իշխանության կողմը գրավելու հեռանկարը: Մարտավարական նկատառումներով վրաց պաշտոնյաները երբեմն

աջակցում էին տեղի հայերին [7] և հույներին՝ ի հակակշիռ անջատամետ արխագների: Արխագիայի քաղաքական պատմության տվյալ շրջափուլի դասավանդման ընթացքում անպայմանորեն պետք է բացատրել, որ վրացական տիրապետության կայացման գործում մեծ դեր է ունեցել սոցիալական խնդիրը, հատկապես հողային բարեփոխման հարցը, որի նշանակությունը կարևորվում էր երկրամասի բնակչության ստվար մասի երկրագործ լինելով: Արխագիայի հողագուրկ, առավելապես մեզրել, հայ և հույն գյուղացիության աջակցությունը շահելու նպատակով վրաց իշխանությունները նրանց սեփական հողամասեր էին խոստանում:

Այսպիսով՝ վրացական գերակայության հաստատմանն Արխագիայում նպաստեցին քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում, թուրքական վտանգը և արխագ ազգայնական թևի ոսնձգությունները ոչ արխագ տարրի իրավունքների և ունեցվածքի նկատմամբ: Թեմայի դասավանդման ընթացքում պետք է հատկանշել նաև, որ Վրաստանի հովանու ներքո ինքնուրույն Արխագիայի ստեղծման ծրագրի ձախողման գործին ոչ պակաս չափով նպաստեց Արխագական ժողովրդական խորհրդի թուլությունը: Բանն այն է, որ արխագների միջավայրում եղանակ ստեղծող ԱԺԽ-ն ի վիճակի չէր (հանուն արդարության նշենք, որ նման դժվարին պայմաններում չէր էլ կարող) ճիշտ կողմնորոշվելու և ապահովելու իր հարազատ երկրի համար ավելի նախընտրելի կարգավիճակ՝ հնարավորինս քիչ կախվածություն Վրաստանից: ԱԺԽ-ի պառակտվածությունը, առանձին անդամների ձեռնարկած անխոհեմ քայլերը ակամայից նպաստեցին Արխագիան հետզհետե Վրաստանի վարչական ենթակայության տակ բերելու վրացական գործիչների եռանդուն ջանքերին:

Երրորդ շրջափուլի (1918թ. հոկտեմբեր – 1919թ. փետրվար) մասին խոսելիս պետք է փաստել, որ Արխագիայի կարգավիճակի շուրջ հակասությունների սրումը հանգեցրեց մի իրադարձության, որի վերաբերյալ տեղեկությունները հակասական են: Վրաց հետազոտողների շրջանում այն տեսակետն է իշխում, թե 1918թ. հոկտեմբերի 9-ին «հակավրացական»

թնին պատկանող ԱժԽ-ի մի շարք անդամներ Սուխումում հակապետական հեղաշրջման փորձ են կատարել: Դրա հետևանքով վրաց կառավարությունն իսկույն որոշում է կայացրել ԱժԽ-ի լուծարման մասին: Դրա հետ մեկտեղ վերացել է Աբխազիայի գործերի պատասխանատու նախարարի պաշտոնը, ինչը դարձյալ հակասում էր 1918թ. հունիսի 11-ի դաշնագրի պահանջներին: Այդ ինստիտուտի գործառույթները հանձնարարել էին կատարել Վրաստանի ՆԳՆ-ին: Այլ խոսքով՝ երկրամասում հաստատվել էր պաշտոնական Թիֆլիսի գործակալների անթաքույց կառավարումը: Ի տարբերություն վրաց պատմաբանների [8]՝ աբխազ հետազոտողները ԱժԽ-ի հետագա աշխատանքի կասեցումը մեկնաբանում են իբրև Աբխազիայի և Վրաստանի փոխհարաբերությունների հնարավոր վերանայումը արգելելու քայլ [9]:

Մենք, սակայն, հակված ենք մտածելու, որ ԱժԽ-ի լուծարման բուն պատճառն ընտրական նոր օրենքի շուրջ ծայր առած վեճն էր: Վրացական կողմը պահանջում էր համընդհանուր, հավասար, ուղղակի ու գաղտնի քվեարկությամբ վերընտրել ԱժԽ-ի կազմը և համալրել այդ կառույցը համամասնական ներկայացուցչությամբ: Առաջին հայացքից դա ժողովրդավարական էր և արդարացի: Աբխազական կողմը, սակայն, դեմ դուրս եկավ դրան, քանզի այդ պարագայում ընտրելու և ընտրվելու իրավունք էր ստանում Աբխազիայի եկվոր ազգաբնակչությունը: Այսինքն՝ «ժողովրդավարական» ընտրությունների պարագայում աբխազները, կամա թե ակամա, ԱժԽ-ում կորցնում էին ճնշող մեծամասնությունը:

Այս առումով կարևորվում է աբխազների թվաքանակի հարցը, որի մասին 1910-ական թվականների համար ճշգրիտ տեղեկություններ, ցավոք, չկան: Գաղտնիք չէ, որ խնդրի կապակցությամբ աբխազական և վրացական գիտական ու քաղաքական շրջանակների մոտեցումներն իրարամերժ են: Աբխազները պնդում են, որ իրենց հայրենիքում ազգային այլ տարրերը (հատկապես վրացիները) տվյալ ժամանակաշրջանում կազմել են ազգաբնակչության ոչ էական հատվածը, և նրանց թվաքանակի զգալի աճը վերագրում են առանձնապես

խորհրդային իշխանության տարիներին տեղի ունեցած նպատակասլաց վերաբնակեցմանը: Մակայն փաստերը ներկայացնում են փոքր-ինչ այլ պատկեր. տվյալ ժամանակահատվածում արխագ բնակչությունը երկրամասի (լավագույն պարագայում) միայն հարաբերական մեծամասնություն էր կազմում [10]: ԱԺԽ-ն համալրված էր գերազանցապես արխագներով՝ լիազորված ազգակից տղամարդկանց հավաքներում բաց քվեարկությամբ, ինչը վրաց կառավարական շրջանակները «հակադեմոկրատական» էին համարում: Հիշյալ կառույցում հայկական, ռուսական, վրացական ու հունական ազգային տեղի խորհուրդների սակավաթիվ ներկայացուցիչները եղանակ չէին ստեղծում: Այս կապակցությամբ հարկ է ուսանողի ուշադրությունը սևեռել ոչ պակաս կարևոր ևս մի փաստի վրա: Ցանկանալով եկվոր բնակչությունն օժտել ընտրելու իրավունքով (առաջին հերթին մեզբել-վրացիներին)՝ պաշտոնական թիֆլիսը հույս էր փայփայում, որ այդ միջոցով կարող է Արխագիայում ստեղծել մի վերահսկելի ներկայացուցչական մարմին, որն այլևս իր ձայնը չի բարձրացնի սույն երկրամասի ինքնորոշման օգտին: Չնայած բուռն քննարկումներին՝ 1917–1918 թվականներին այդպես էլ չհաջողվեց գումարել որևէ լիազոր մարմին, որն իրավասու կլիներ խոսելու երկրամասի բազմազգ բնակչության անունից: Արխագիայի կարգավիճակը տակավին մնում էր անորոշ:

Բոլոր վայրիվերումները, որոնք տեղի էին ունենում Արխագիայի հիմնահարցի շուրջ, բերում էին խառնաշփոթի նրա կառավարման ասպարեզում: Այս երևույթն ուներ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Երկրամասն արխագական ազգային ինքնավարության վերածելը դիմադրություն էր հանդիպում նրա բազմազգ լինելու պատճառով: Արխագիայի ինքնավարության հայտատարական բնույթը պայմանավորված էր նաև վրաց քաղաքական շրջանակներում տարածված միտումով, թե երկրամասին իրական ինքնավարության տրամադրումը կհանգեցնի դրա տարանջատմանը: Արխագիայի ինքնավարության անքակտելիության մասին Վրաստանի կառավարության հայտարարական հավաստիացումները հեռու

էին իրականությունից: Այսպիսով՝ 1918 թվականի հունիսին ձեռք բերված վրաց-աբխազական պայմանավորվածությունները չունեցան որևէ գործնական և իրավական շարունակություն Վրաստանի կազմում Աբխազիայի կարգավիճակի կարգավորման հարցում:

Անդրադառնալով *չորրորդ* շրջափուլի (1919թ. մարտ – 1921թ. փետրվար) իրադարձությունների լուսաբանմանը՝ հարկավոր է փաստել հետևյալը. 1919թ. փետրվարին ընտրված Աբխազիայի ժողովրդական խորհուրդը (ԱԺԽ) ենթադրվում էր որպես օրենսդիր մարմին, սակայն մինչև Աբխազիայի սահմանադրության հաստատումը նրա իրավունքների շրջանը և պատասխանատվության ծավալը դեռ հստակ չէր որոշված: Այդ իսկ պատճառով նա ուներ լոկ ներկայացուցչական դատարկ գործառույթ: ԱԺԽ-ի և նրա կողմից այնուհետև ձևավորված տարածքային գործադիր իշխանության՝ «Կոմիսարիատի» լիազորությունները, ժամանակի ականատեսների վկայությամբ, ձևական էին. իշխանական իրական լծակները դարձյալ վրացական զինվորական հրամանատարության ձեռքում էին: Ուսանողների ուշադրությունը պետք է ևս սևեռել այն կարևոր հանգամանքի վրա, որ աբխազական երկրամասի կառավարման գործում զինվորականների չափազանց մեծ դերը ակամայից ճանաչում են նաև վրաց պատմաբանները [8, էջ 82]:

Ի նկատի ունենալով վերը շարադրածը, դասախոսության ունկնդիրներին փաստելով՝ հարկավոր է բացահայտել, թե ինչու 1919թ. մարտ ամսից Աբխազիայի «ինքնավար» մարմինները դիտվում էին իբրև զեմստվոյական: Առանձնապես պետք է շեշտվի, որ ի համեմատ 1918թ. կնքված դաշնագրերի պահանջների՝ հիշյալ հանգամանքը բերեց դրանց կարգավիճակի զգալի նվազեցմանը: Նորընտիր ԱԺԽ-ի բացման նախօրյակին վրաց կառավարությունը, երկյուղելով ռուսական «սպիտակ» զորքերի վտանգից, շտապեց հայտարարել, թե Աբխազիան իր բոլոր ներքին գործերում ինքնավար է: ԱԺԽ-ին իրավունք էր տրվում իր ձեռքը վերցնելու վարչական կառավարման դեկը՝ ներառյալ զեմստվոյի ղեկավարման գործառույթը: Միաժամանակ շեշտվում էր, որ Աբխազիայի ինքնավար մարմինների

լիազորությունները կհատակեցվեն ավելի հանգամանորեն ապագա սահմանադրությամբ [11]: Ընդամին, մութ և անհասկանալի էր մնում, որ սահմանադրությամբ՝ Վրաստանի, թե Աբխազիայի: Եվ պատահական չէ, որ դա շուտով տեղիք տվեց լուրջ տարաձայնությունների: Լուսաբանելով սույն իրադարձությունների և դեպքերի հետագա ընթացքը՝ պետք է ցույց տալ, որ ինքնավար կառավարման մեխանիզմը կարգավորող օրենսդրության բացակայության պարագայում պաշտոնական Թիֆլիսի կողմից Աբխազիայի ինքնավարության սկզբունքի վերահաստատումը հանգեցրեց հակասական հետևանքների:

«Կոմիսարիատի» վերահսկման ներքո պետք է գործեին տեղական ինքնակառավարման մարմինները: Սակայն այդ վերադաս մարմինը չունեւ իրավունքների, պարտականությունների սահմանված չափ՝ ոչ միայն կենտրոնական հիմնարկների, այլ նաև տեղական ստորադաս վարչակազմի նկատմամբ: Հետզհետե երկրամասում գավառական զեմստվոների առաջացման հետևանքով տեղական վարչությունը նեղություն էր զգում իրենց և կենտրոնական կառավարության միջև ևս մի լրացուցիչ օղակի՝ ԱԺԽ-ի և «Կոմիսարիատի» առկայության հետևանքով: Աբխազիայի զեմստվոները դժգոհ էին, քանի որ «Կոմիսարիատը» վերցրել էր իր վրա սույն երկրամասի բարձրագույն զեմստվոյական մարմնի գործառույթը՝ այն էլ աշխատելով շատ լայն մեկնաբանել իր լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ: Զեմստվոների բոլոր որոշումները հաստատման համար պարտադիր վերաքննվում էին «Կոմիսարիատի» կողմից: Սակայն տեղի զեմստվոների «ըմբոստությունը» անհիմն չէր: Բանն այն էր, որ Վրաստանի պետական կարգը՝ հաստատված 1919 թվականի մարտին հրավիրված իր Սահմանադիր ժողովի կողմից, «ունիտար (միահեծան) դեմոկրատական հանրապետություն» էր: Տեղական կառավարման հիմնական օղակը գավառական զեմստվոներն էին (վրացերեն՝ «երոբա»)՝ օժտված ինքնավար լիազորություններով: Հետևաբար յուրաքանչյուր գավառ վերածվում էր տեղական (վարչատարած-

քային) ինքնավարության: «Ինքնավար» ԱԺԽ-ի և «Կոմիսարիատի» գոյության փաստն ակամայից խլում էր արխագական երկրամասի գավառական վարչակազմից նրա լիազորությունների նշանակալի մասը, որի հետևանքով այդ օղակների փաստացի կարգավիճակը, ըստ էության, նույնական չէր Վրաստանի այլ գավառների գեմստվոններին: Եվ մեզրելաբնակ Սամուրգականի գավառի առաջին իսկ գեմստվոյական ժողովը միաձայն որոշում ընդունեց՝ պահանջելով անմիջական կապ Թիֆլիսի հետ առանց «սուխումյան իշխանությունների» միջնորդության [12]: Մինչդեռ Մահմանադիր ժողովում քննարկվում էր «Զեմստվոնների միության մասին» համապատասխան օրինագիծը, Աբխազիայի գեմստվոնները անցնելով առաջ շտապեցին ձևավորել նախ իրենց միությունը: 1920 թվականից արդեն գոյություն ունեւ Սուխումի շրջանի գավառական գեմստվոնների «կենտրոնական» վարչությունը: Ենթադրվում էր, թէ «Կոմիսարիատի» բոլոր լիազորությունները կանցնեն այդ կառույցին: Աբխազիայում չկար ոչ մի լիազոր մարմին, ոչ էլ մի տեղական հիմնարկություն, որն առօրյա աշխատանքը կատարելիս իր հայացքը չնետեր դեպի Թիֆլիս [13]:

ԱԺԽ-ի շրջանակներում գործող արխագական ընդդիմությունը պահանջում էր իր երկրի համար պետական բնույթ կրող ինքնավարություն: Այդ պահանջը ամբողջական դարձնելու համար հարկ էր ԱԺԽ-ն օժտել օրենսդիր, իսկ «Կոմիսարիատը»՝ լիիրավ պետական իշխանությամբ: Սակայն պաշտոնական Թիֆլիսը համաձայն չէր դրան՝ համարելով, որ դա լրջորեն կվնասի Վրաստանի «ամբողջականությանը և ինքնիշխանությանը»: Եվ ուժը նրա կողմն էր:

Այսպիսով, իրադարձությունների բերումով Աբխազիայի «ինքնավար» մարմինները, ավաղ, հայտնվել էին միանգամայն ավելորդ օղակի դերում: Այս կարևոր հանգամանքը, որն ուներ օբյեկտիվ հիմք, չէին նկատել և հետևաբար չէին լուսաբանել ո՛չ արխագ, ո՛չ վրաց հետազոտողները: Վրաց պատմաբանները, այնուամենայնիվ, համառորեն պնդում են, որ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության շրջանակներում Աբխազիան օգտվում էր ինքնավարությունից: Սակայն նրանք

առհասարակ լուռ են մնում կամ նրբանկատ շրջանցում են այդ ինքնավարության բնույթին որևէ որակ տալու հրամայական պահանջը: Ավելին, արտահայտում են այն թյուր կարծիքը, թե 1919 թվականի մարտ ամսից Արխագիան «հանրապետության» կարգավիճակ է ունեցել [14]։ մի բան, որ չի համապատասխանում իրականությանը: Արխագիան այդ իրավունքը, ինչպես հայտնի է, ձեռք բերեց ուղիղ երկու տարի անց՝ խորհրդայնացումից հետո: Իսկ քննության առարկա ժամանակաշրջանում նա օժտված էր միայն «զեմսովոյական ինքնավարությամբ» [15]:

Հարկ է առանձնակի շեշտել, որ վրացական կողմը միտում ուներ նաև սահմանափակելու արխագ բնակչության իրավական կարգավիճակը ազգային-մշակութային ինքնավարության շրջանակներում: Վրաստանի կառավարական վերահսակի ներկայացուցիչները առանձնակի պատրանք ունեին, թե այս կերպ նա կկարողանա ի չիք դարձնել Արխագիայի քաղաքական լայն ինքնավարության մասին երազանքները:

Սակայն պատմությունն ընթացավ այլ ուղիով: Համընդհանուր սկզբունքով ընտրված Արխագիայի ժողովրդական խորհուրդը 1919թ. մարտի 20-ին ընդունեց «Ինքնավարության մասին ակտը», ըստ որի երկրամասի վերջնական իրավական վիճակը պետք է որոշեր նրա սահմանադրությունը: Արխագիայի «մենշնիկ» սոցիալ-դեմոկրատները, որոնք ԱՃԽ-ում մեծամասնություն էին, հանդես եկան մարզային ինքնակառավարման, իսկ ընդդիմությունը՝ քաղաքական լայն ինքնավարության պահանջով: ԱՃԽ-ի շրջանակներում գործող «անկախ սոցիալիստները», ինչպես նաև հետագայում առաջացած «միջազգայնականների» (ինտերնացիոնալիստների) խմբակցությունը արխագ հասարակության ներսում տարածում էին Խորհրդային Ռուսաստանի հետ մերձեցման գաղափարը: «Հակավրացական» պայքարի դրոշը անցավ արխագ սոցիալիստական տարրերի ձեռքը, ովքեր ակտիվ համագործակցում էին բոլշևիկյան ընդհատակի հետ: Վերջիններս ամեն կերպ ջանում էին ի շահ իրենց ծառայեցնել ընդդիմությունն ԱՃԽ-ում: Ելնելով հայտնի նպատակներից՝ բոլշևիկները ձգտում

էին վարկաբեկել անկախ Վրաստանի կազմում Աբխազիայի ինքնավարության գաղափարը: Ինչ վերաբերում է արխազ ազգային մտավորականությանը, նա առաջ էր քաշում Աբխազիայի և Վրաստանի պետական հավասարության գաղափարը, որի դեպքում նրանց հարաբերությունները պետք է լինեին համադրաշնային:

Սահմանադրության մշակման ընթացքում պարզվեց, որ արխազական ընդդիմության նպատակն է ստեղծել Վրաստանի հետ թույլ և ժամանակավոր դաշինք, որպեսզի հետագայում՝ հարմար պահին, կարողանային խզել կապը նրա հետ և շրջել Աբխազիան դեպի այլ քաղաքական կողմնորոշում: Ըստ վրաց պատմաբանների, իրազեկ լինելով այդ նպատակների՝ պաշտոնական Թիֆլիսը գրավել էր զգուշավոր դիրք և ամեն կերպ ջանում էր հետաձգել Աբխազիայի սահմանադրության վավերացումը [8, էջ 112]:

2) սովորողների կողմից ճիշտ մտածելու կարողություն-

ները, հմտություններն ու եզրահանգումների կատարումը և պատմական օրինաչափություններին հանգելը:

Ինչպես ցույց է տվել առաջավոր մանկավարժական փորձը, շատ սովորողներ ուսուցչի մեկանգամյա բացատրությունից հետո հաճախ չեն կարողանում ամբողջությամբ ընկալել որոշ կարևոր հիմնախնդիրներ, որը կախված է նրանց ընկալունակության և անհատականացման աստիճանից: Օրինակ՝ «Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում» թեման: Ելնելով դասագրքի հնարավորություններից և ծավալից՝ այնտեղ հնարավոր չէ ամբողջությամբ ներկայացնել «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, քաղաքական բռնությունները, քաղաքացիական պատերազմի պատճառները, ընթացքը և շատ այլ բարդ հասկացություններ, ուստի դրանք սովորողների մեծ մասի համար մնում են անհասկանալի, և ուսուցիչը ստիպված է հավելյալ ժամանակ ծախսել դրանք նորից բացատրելու համար:

ա) Թվարկե՞ք բոլշևիկների այն միջոցառումները, որոնք երկրում առաջացրեցին տարբեր քաղաքական ուժերի և սոցիալական խմբերի դժգոհությունը,

բ) ինչու՞ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Հայաստանում առաջացրեց գյուղացիության արդարացի դժգոհությունը, որը վերջնական արդյունքում հանգեցրեց համաժողովրդական ապստամբության, և ի՞նչ նպատակներ էր հետապնդում դաշնակցություն կուսակցությունը,

գ) ինչու՞ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը հանգեցրեց քաղաքական բռնությունների,

դ) ինչու՞ բոլշևիկները խախտեցին 1920թ. Երևանի համաձայնագիրը,

ե) ինչու՞ 1918թ. մինչև 1920թ. կեսերը Խորհրդային Ռուսաստանում գյուղացիության զանգվածային դժգոհություններ տեղի չէին ունենում,

զ) ինչու՞ 1921թ. գարնանը Խորհրդային Ռուսաստանում և Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը վերացվեց,

է) որո՞նք էին 1921թ. ՀԽՍՀ Ժողկոմխորհի կողմից համա-

ներում հայտարարելու պատճառները:

Այս հիմնախնդիրների պատասխանները պարզաբանելուց և աշակերտների կողմից դրանք ընկալվելուց հետո նոր միայն ուսուցիչը պետք է անցնի գիտելիքների ստուգմանն ու գնահատմանը, ապա նոր նյութի հաղորդմանը, քանի որ առանց այս հարցերի յուրացման սովորողների համար անհասկանալի են մնում հետագայում տեղի ունեցած շատ տնտեսական ու քաղաքական գործընթացներ: Թեմայի հարցման ու գնահատման ընթացքում ուսուցիչը չպետք է շտապի համաձայնել առանձին սովորողների պատասխանների հետ, եթե նույնիսկ դրանք ճիշտ են, այլ այնպես է անում, որ իր հետ երկխոսության կամ բանավեճի մտնեն որքան հնարավոր է մեծ թվով սովորողներ:

Դա թույլ է տալիս լարվածության մեջ պահել ամբողջ դասարանը և ապահովել յուրաքանչյուր աշակերտի անհատական մասնակցությունը թեմայի ուսումնասիրությանը:

Երբեմն սկսելով երկխոսությունը՝ ուսուցիչների մի մասը չեն կարողանում մեթոդապես ճիշտ ժամանակին կանգնեցնել այն, որը տանում է հավելյալ ժամանակի կորուստի և սովորողների մոտ հետաքրքրությունների ու ակտիվության անկման՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ:

Դասի ժամանակ երկխոսությունը համարվում է սովորողների աշխատանքի անհատականացման լավագույն ձևերից մեկը: Սակայն դասարանում միշտ էլ կան ծույլ, անուշադիր, դասի գործընթացին չմասնակցող աշակերտներ, իսկ փորձառու ուսուցիչները այն շատ արագ նկատում են: Այդ պատճառով էլ ուսուցիչը, ելնելով սովորողների անհատական առանձնահատկություններից, դասի ընթացքում պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի նաև որոշակի սովորողների վրա, անմիջապես դիմի նրանց՝ ցուցաբերելով առանձնահատուկ մոտեցում: Այստեղ շատ կարևոր է փորձել գրավել տվյալ սովորողների ուշադրությունը, ստիպել նրանց մտածել, մասնակցել տվյալ նյութի քննարկմանը: Ինչպես ցույց են տվել մեր հետազոտություններն ու բազմաթիվ առաջավոր ուսուցիչների փորձը, այդ ժամանակ օգտակար են հետևյալ մեթոդա-

կան խորհուրդներն ու հանձնարարականները.

ա) ուսուցիչը հարցերով դիմում է աշակերտներին, հասկապես նրանց, ովքեր միայն ֆիզիկապես են դասարանում և մտքով ուրիշ տեղ են,

բ) ուսուցիչը դիմում է ամենաուժեղ աշակերտներից մեկին, բայց ոչ սովորական հարցով, այլ այնպիսի, որի պատասխանում լինի հիմնախնդիր և նպաստի երկխոսության զարգացմանը՝ ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, ու աստիճանաբար տանի դրա լուծմանը,

գ) լավ ճանաչելով իր աշակերտներին՝ ուսուցիչը ոմանց վրա կարող է ազդել հայացքով, ոմանց վրա՝ ձայնի տեմպով, ոմանց՝ խրախուսելով և այլ մեթոդներով, եղանակներով ու հնարներով,

դ) սովորողների անհատական ինքնուրույն նախապատրաստման առաջադրանքները ուսուցիչը պետք է մտածի ոչ միայն դասի վերջում, այլ նաև դրա ընթացքում: Նման պայմաններում սովորողները ավելի հեշտությամբ են ընկալում և յուրացնում տնային հանձնարարություններն ու առաջադրանքները, ավելի ուշադիր են լինում և լսում են ուսուցչի բացատրած ցանկացած նյութը:

Ուսուցման կազմակերպման անհատականացման գործում շատ մեծ տեղ ունեն սեմինար պարապմունքները: Այն մի գործընթաց է, որը նպաստում է սովորողների խոսքի զարգացմանը, սկզբնաղբյուրների հետ աշխատանքում ձևավորում է ինքնուրույնություն [4, էջ 174], ուսուցչին հնարավորություն է տալիս դասը ավելի արդյունավետ կազմակերպելու, որն էլ իր հերթին նպաստում է սովորողների ինքնուրույն ճանաչողության զարգացմանը: Ըստ մեր դիտարկումների՝ աշակերտների 16–20%-ը անպատրաստ է ներկայանում սեմինարին, 45–49%-ը՝ պատրաստված, 20–25%-ը պատրաստ են ամբողջությամբ պատասխանել սեմինարի հիմնական հարցերին, իսկ 13–16%-ը ներկայացնում էին լրացուցիչ տեղեկատվություն և ցուցաբերում թեմայի լիարժեք իմացություն:

Նման դասերի ընթացքում նպատակահարմար է դասի սկզբում անցկացնել թեստային կամ գրավոր ստուգում: Այն

պետք է տևի ոչ ավելի քան 7–9 թույլ, որի ընթացքում յուրաքանչյուր սովորող կարող է ցույց տալ իր գիտելիքները, կատարել ինքնագնահատում, քանի որ նրանց կողմից տրված պատասխանները գնահատվում են անմիջապես և հրապարակային:

Նախընտրելի է, որ աշակերտները թեմայի ուսումնասիրության վերջում արտահայտեն իրենց կարծիքը քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ:

Մանկավարժական փորձը ցույց է տվել, որ թույլ սովորողներին նպատակահարմար է ստուգել թեստային առաջադրանքներով, որոնք պետք է կազմված լինեն պատմական ուսումնական նյութերի բաղադրատարրերից (թվեր, փաստեր, իրադարձություններ, հասկացություններ, սկզբնաղբյուրներ և այլն), ժամանակագրական և քարտեզագիտական հանձնարարություններ, իսկ ուժեղ աշակերտների համար պետք է պատրաստել հիմնախնդրային և ստեղծագործական հանձնարարություններ, թեստեր ազատ պատասխաններով և այլն [3, էջ 60]:

Նմանօրինակ գրավոր և բանավոր աշխատանքները միշտ տալիս են դրական արդյունք և նպաստում են սովորողների ինքնուրույն մտածողության և ճանաչողական խնդիրների լուծմանը, ապահովում որակական բարձր արդյունավետություն: Այստեղ, ըստ մեզ, գլխավոր տարբերությունը կայանում է հետևյալում. թեստային աշխատանքի ժամանակ սովորողները առաջարկված չորս տարբերակներից ընտրում են միակ ճիշտ պատասխանը, իսկ դա հաճախ համընկնում է գուշակության կամ պատահականության հետ: Գրավոր աշխատանքը պահանջում է մտավոր և վերհիշողական լարվածություն, քանի որ այստեղ աշակերտները ստիպված են լինում ցուցադրել իրենց գիտելիքներն ամբողջությամբ:

Խմբային պարապմունքների ընթացքում անհատականացումը կատարվում է սովորողների ռեֆերատների, զեկուցումների, էլույթների կազմակերպման ժամանակ: Նման դեպքում մեկ էլույթ ունեցող աշակերտը աշխատանքի մեջ է ներգրավում բազմաթիվ սովորողների: Ռեֆերատը կամ զեկուցումը քննարկում են մի քանի մարդ, իսկ մի քանիսն էլ, հետա-

քրքրությունից ելնելով, հարցեր են ուղղում զեկուցողին, իսկ նախօրոք ընտրված մրցավարները գնահատում են իրենց ընկերոջ ելույթը: Այստեղ ուսուցիչը կատարում է պասիվ կամ խորհրդատուի դեր: «Ուսուցիչը կարողանում է թաքցնել իր դեկավար լինելու դերը՝ ստեղծելով ազատության պատրանք: Ուսուցման գործընթացում այս գործին մեծապես նպաստում է նպատակահարույց ուսուցումը, որի ժամանակ աշակերտը համոզված է, որ ինքը որոնումներ է կատարում սեփական նպատակներին հասնելու համար» [1, էջ 131]:

Դասերի, պարապմունքների ընթացքում սովորողների անհատական աշխատանքի, գիտելիքների, հմտությունների, ունակությունների ապացույցը հանդիսանում է ստեղծագործական բանավեճը: Եթե ուսուցչի կողմից բանավեճը նախօրոք նախապատրաստված է, նրա յուրաքանչյուր մասնակից կարող է ցուցադրել իր ամբողջական կարողությունները, հմտություններն ու անհատականությունը: Բանավեճի մասնակիցների ելույթներից, նրանց կողմից առաջ քաշված հարցերից և պատասխաններից ուսուցիչը որոշում է յուրաքանչյուր մասնակցի անհատական պատրաստվածության աստիճանը և գնահատում նրանց: Դրա համար խորհուրդ է տրվում կիրառել հետևյալ չափորոշիչները.

ա) որքանո՞վ են սովորողները ուսումնասիրել և տիրապետում ընտրված բանավիճային թեմային,

բ) կարո՞ղ են սովորողները ազատ, առանց գրառումները կարդալու շարադրել իրենց մտքերը,

գ) ինչպիսի՞ն է նրանց պատմական փաստերի, գործընթացների, երևույթների, իրադարձությունների ընկալման մտահորիզոնը,

դ) արդյո՞ք նրանք օժտված են կամ նրանց մոտ ձևավորված է պատմական ճկուն մտածողություն և արագ կողմնորոշման ընդունակություններ,

ե) ինչպիսի՞ եղանակներ ու միջոցներ են կիրառում բանավեճի մասնակիցները իրենց բերած փաստերի գիտականությունն ու ճշմարտացիությունը ապացուցելու համար,

զ) ինչպիսի՞ն է նրանց խոսքի և արտահայտման կուլտուրան,

է) բանավեճի մասնակիցները ինչպե՞ս են հիմնավորում իրենց կարծիքը և այլն:

Բանավեճի ընթացքում սովորողների անհատական աշխատանքը ենթադրում է նաև ուսուցչի անհատական աշխատանք: Ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալը.

1. ուսուցիչը հոգ է տանում յուրաքանչյուր սովորողի պատրաստվածության մասին,

2. ուսուցիչը նախօրոք պատրաստվելուց հետո դասարանի կամ առանձին աշակերտների առջև դնում է վիճելի, հիմնախնդրային սուր հարցեր և նախաձեռնում է բանավեճը,

3. ուսուցիչը ղեկավարում է բանավեճի ընթացքը և օգնում աշակերտներին հաղթահարելու դժվարությունները, սակայն հնարավորինս քիչ միջամտություններով:

Որպեսզի ուսուցիչը կարողանա յուրաքանչյուր աշակերտի հնարավորությունն տալ մասնակցելու բանավեճին և ցուցադրելու իր անհատական մտածողության աստիճանն ու գիտելիքները, չի շտապում ուղղելու նրանց կողմից թույլ տրված սխալները և պարտադրելու իր կարծիքը: Նա սպասում է, որ աշակերտները իրենք ուղղեն իրենց սխալները, իսկ եթե այն տեղի չի ունենում, նոր միջամտում է՝ սովորողներին տանելով ճիշտ ճանապարհով, նրանց որոնումները կողմնորոշում ցանկալի ուղղությամբ:

Սովորողների անհատական աշխատանքի զարգացման ու ձևավորման լավագույն ձևերից է նոր տեղեկատվության գրառումը, որը հանդիսանում է նրանց հմտությունների և կարողությունների զարգացման յուրօրինակ տարրերից մեկը:

Սովորաբար աշակերտները համառոտագրություններ են կատարում դպրոցական դասախոսությունների ժամանակ, որի օգնությամբ նրանք սովորում են արագ մտածել, ճիշտ կողմնորոշվել, ավելի դյուրին ընկալել, յուրացնել նոր պատմական նյութը: Բայց, երբ ամբողջ դասարանը լրջորեն նախապատրաստվել է տվյալ պարապմունքին, շատ սովորողներ օգտագործել են ոչ միայն դասագիրքն ու քրեատոմատիաներ, այլև լրացուցիչ գրականություն, փաստաթղթային նյութեր, սկզբնաղբյուրներ ու տեղեկատվական աղբյուրներ, և նրանց

ելություններից դպրոցականների մեծ մասը կարող են նոր գիտելիքներ ստանալ: Այստեղ շատ կարևոր է, որ սովորողները դրանց վերաբերյալ գրառումներ կատարեն իրենց աշխատանքային տետրերում:

Մանկավարժական ու մեթոդական տեսանկյունից ճիշտ են վարվում այն ուսուցիչները, որոնք սովորողներին չեն հանձնարարում ինքնուրույն պատրաստել միատեսակ ընդհանուր առաջադրանք: Ճանաչելով իր աշակերտներին և լավ իմանալով նրանց ուժեղ և թույլ կողմերը, յուրաքանչյուր սովորողի վերաբերմունքը ուսման նկատմամբ՝ ուսուցիչը ոմանց համար պետք է ձևակերպի խմբային, իսկ ոմանց համար էլ՝ անհատական առաջադրանքներ, որոնց բարդությունը կախված է սովորողների առաջադիմությունից և ընկալունակության աստիճանից:

Այսպես՝ որոշ սովորողների կարելի է հանձնարարել թեմայի վերաբերյալ հենակետային համառոտագրություն մշակելու առաջադրանք, մյուսներին՝ ուսումնասիրել սկզբնաղբյուրները, մեկ այլ խմբի՝ ծանոթանալ փաստաթղթերի առանձնահատկություններին և այլն, իսկ ավելի ուժեղ սովորողներին՝ ռեֆերատներ և զեկուցումներ: Սովորողների մոտ մեծ հետաքրքրություն են առաջացնում կառուցվածքային, կառուցվածքատրամաբանական, կառուցվածքաորոնողական բնույթի հաղորդումներն ու կատարված առաջադրանքները, ինչպես նաև պատմական փորձի հիման վրա անցյալի և ժամանակակից իրականության վերլուծությունները:

Այսպիսին էին մեր և Հայաստանի Հանրապետության մի շարք առաջավոր ուսուցիչների փորձի արդյունքներն ու առավել իրական ճանապարհները, մեթոդներն ու եղանակները, որոնք թույլ են տալիս անհատականացնել սովորողների անհատական ու խմբային աշխատանքը պատմական գիտելիքների յուրացման խնդրում, որոնք էլ իրենց հերթին ապահովում են սովորողների ինքնուրույն ճանաչողական գործընթացի արդյունավետության բարձրացումը, նպաստում որակական բարձր աստիճանի ձևավորմանը:

Այս հիմնախնդիրը այսօր էլ շատ հրատապ է՝ կապված ուսումնական և պատմության ծրագրերի բազմազանության ու այլընտրանքային դասագրքերի առկայության հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մանուկյան Ս. Պ.* Մանկավարժագիտություն: Նոր դասընթաց. Եր., 2002:
2. Методика обучения истории в средней школе. В 2-х ч. // Отв. ред. Ф.П. Коровкин, Н.Г. Дайри. М. 1978г.
3. Настольная книга учителя истории. 5–11 классы / Авт.–сост. М.Н. Чернова. М.: 2006г.
4. *Степанищев А.Т.* История Отечества: преподавание в школе: М.: 2001.
5. *Студеникин М.Т.* Методика преподавания истории в школе: М.: 2006.
6. *Шамова Т.И.* Пути индивидуализации обучения школьников // Преподавание истории в школе. 1988. № 4.
7. *Шоган В.В.* Методика преподавания истории в школе. Ростов н/Д: 2007.

ИНДИВИДУАЛИЗАЦИЯ РАБОТЫ УЧАЩИХСЯ ВО ВРЕМЯ ПРЕПОДАВАНИЯ ИСТОРИИ

А. Папоян

АННОТАЦИЯ

В статье обсуждаются основные вопросы, касающиеся индивидуализации и групповых работ учащихся в преподавании истории. Представлены виды заданий разной степени сложности, предназначенные для учащихся, имеющих разные способности и умения. Представлены некоторые способы, методические навыки и формы, примененные нами. На примерах обоснованы те способы повышения эффективности индивидуализации и групповых работ, которые способствуют более легкому усвоению знаний и развитию самостоятельного познавательного процесса учащихся.

Ключевые слова: индивидуализация, групповые работы, обучение, уровень личной подготовки, умственное и репродуктивное напряжение.

INDIVIDUALIZATION OF STUDENT WORK WHEN TEACHING HISTORY

H. Papoyan

SUMMARY

The article discusses the main issues related to individualization and studentgroup work in history class. There are tasks of various levels of difficulty designed for students with different abilities and skills. Some approaches, teaching methods and forms used by us are presented in the paper. The ways to improve individualization and group work which contribute to easy absorption of knowledge and development of the process of self-study by students are illustrated by examples.

Keywords: *individualization, groupwork, education, level of self-preparation, mental and reproductive tension.*

ПРОБЛЕМА АДАПТАЦИИ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Л.Г. Погосян

АННОТАЦИЯ

В данной статье представлены психологические особенности младшего школьного возраста. Описывается ведущая деятельность и психологические новообразования, физические, психические, социальные, интеллектуальные и нравственно-волевые качества, необходимые ребенку при поступлении в школу, а также представлены аспекты физиологической и психологической адаптации в начальной школе.

Ключевые слова: *развитие, младший школьный возраст, готовность к школе, психологическая адаптация, физиологическая адаптация.*

Детскую психологию изучали З. Фрейд, А. Валлон, Э. Эриксон, Л. Выгодский, А. Бине и многие другие. В своей работе «Проблема возраста» Л. Выгодский писал, что необходимо изучать структуру и динамику детской психики. Изучение психологии ребенка – ключ к пониманию психологии взрослого человека [1]. Он отводил детской психологии фундаментальную роль в решении задачи создания «новой» психологии, подчеркивая, что «единственно правильный путь – идти в изучении психики от ребенка к взрослому» [1]. Современных психологов интересует не только процесс развития, но и пути его достижения.

О процессе развития ребенка существуют различные точки зрения. Некоторые психологи считают, что это – непрерывный процесс, а другие – дискретный. При непрерывном развитии процесс идет в равномерном темпе, и определенных границ не существует. А при дискретном развитии процесс может ускоряться или замедляться, и при этом имеет ведущий фактор развития. В настоящее время большинство специалистов склонно к дискретному развитию. Именно поэтому выделяют стадии и этапы развития, которые существенно отличаются друг от друга. При этом, человек проходит через все стадии поочередно от младенчества до ранней юности. Проблема возрастной периодизации актуальна до сих пор. Л. Выгодский предложил основываться на анализе со-

циальной ситуации развития, психические новообразования и переходные периоды развития.

Понятие «возраст» определяют по-разному. Это и качественно своеобразный период физического, психологического и поведенческого развития, характеризующийся присущими только ему, особенностями (А. Немов), и относительно замкнутый цикл детского развития, имеющий свою структуру и динамику (Л. Выгодский) [2].

Выделяют физический и психологический возраст. Психологический возраст – это уровень психологического развития, достигнутый к определенному возрасту. Физический и психологический возраст могут не совпадать. Основываясь на периоды Ж. Пиаже, можно сказать, что в младшем школьном возрасте – от 7 до 11 лет стабилизируется организация понятий, а Э. Эриксон считает, что в этом возрасте ребенок начинает понимать ценность жизненных достижений [2]. Личность человека формируется именно в этом возрасте.

Поступление в школу является переломным моментом в жизни ребенка. От успешного начала школьной жизни зависит успеваемость, отношение к школе и успех в жизни. Начало школьного обучения – закономерный этап на жизненном пути ребенка: каждый дошкольник, достигая определенного возраста, идет в школу [3]. С развитием технологий меняется подход к учебному процессу. Вопрос адаптации детей к школе особенно актуален на современном этапе, т.к. снизился возраст начала школьного обучения. Долгие годы дети поступали в школу в семь лет. В последние десятилетия начальный школьный возраст снизился до шести лет. Но разница в год может сильно повлиять на развитие ребенка как личности. В возрасте 6–7 лет формируются многие психологические новообразования. Изменяются поведение, самооценка, формируются социальные нормы и мотивация, в организме происходят физиологические изменения. Доказано, что шестилетние дети проходят более долгий и трудный путь адаптации, нежели семилетние. Затягиваясь почти до 6-ти месяцев, а иногда и до года, процесс адаптации становится пыткой не только для самого ребенка, но и для его ближайшего окружения: родителей, учителей, одноклассников.

С поступлением в школу центром социальной ситуации развития ребенка становится учитель, а учебная деятельность стано-

вится ведущей. Начинает развиваться система побуждений, которая придает смысл учебной деятельности. Ребенок ставит перед собой задачи, производит **учебные действия для усваивания этих задач, контролирует и оценивает свои действия.**

В младшем школьном возрасте активно развиваются психические функции. К новообразованиям этого возраста относятся развитие словесно-логической памяти, повышается устойчивость внимания, целенаправленность восприятия, рефлексия и умение управлять поведением. Доминирующим является словесно-логическое мышление, оставив образное мышление позади. Именно в конце младшего школьного возраста проявляются индивидуальные различия: среди детей психологами выделяются группы «мыслителей», «практиков» и «художников». Но у большинства детей наблюдается относительное равновесие между разными видами мышления. Благодаря учебной деятельности в начальных классах развиваются психологические процессы непосредственного познания окружающего мира – ощущения и восприятия. Восприятие недостаточно дифференцировано, из-за чего ребенок может путать буквы и цифры, схожие по написанию. Но в процессе обучения восприятие становится целенаправленным и управляемым. Активно развиваясь, интеллект дает возможность устанавливать связи между элементами воспринимаемого объекта. Например, в возрасте 2–5 лет ребенок перечисляет предметы на картине, в 6–9 лет может описать картину, а после 9 лет – интерпретирует увиденное. **Память** развивается в направлении произвольности и осмысленности. Дети младшего школьного возраста могут произвольно запоминать неинтересный материал, постепенно основываясь на произвольную память. Сильно развита механическая память и совершенствуется смысловая память, которая помогает найти рациональные способы запоминания. В этом возрасте развивается внимание, повышается его устойчивость, переключение и распределение.

Готовность к школьному обучению подразумевает физиологическое, психическое, интеллектуальное, социальное и нравственно-волевое развитие ребенка. Подготовка к школе – это комплексное мероприятие. Оно охватывает все сферы жизни ребенка и обеспечивает его гармоничное развитие.

В старшем дошкольном возрасте ребенок быстро развивается в физиологическом плане. Перестраиваются нервная, сердеч-

но-сосудистая и эндокринные системы, развивается опорно-двигательный аппарат. По своим характеристикам головной мозг шестилетнего ребенка в большей степени приближается к показателям мозга взрослого человека [3].

Психологическая готовность к школе – это необходимый и достаточный уровень психического развития ребенка для освоения школьной программы в условиях обучения в группе сверстников [4]. Ему необходимо установить положительные взаимоотношения со сверстниками и учителями, адаптироваться к новой обстановке. Поэтому у дошкольников необходимо формировать такие качества, как: отзывчивость, сочувствие, доброжелательность, умение быть принципиальным, отстаивать свою точку зрения, готовность помочь и принять помощь, а также оптимизм, жизнерадостность, интерес к познанию и коллективной деятельности [5].

Наиболее важным является интеллектуальная готовность ребенка. Ребенок должен уметь сравнивать, обобщать, классифицировать объекты, задавать вопросы, отвечать на вопросы, иметь навык пересказа. Без таких навыков ему будет сложно усваивать учебный материал.

Дети этого возраста очень эмоциональны, не умеют контролировать свои чувства и очень бурно проявляют свои эмоции. Это может проявиться в частой смене настроения, упрямстве, капризах, бурном проявлении эмоций. Но с годами они приобретают способности регулировать свои чувства и и эмоции.

Показателями волевой готовности к школе являются: сформированность волевого действия, развитие способности управлять своим поведением, соподчинение мотивов. Младший школьник не может бороться за намеченную цель, преодолевать трудности. При первой же неудаче он перестает верить в себя. Известно, что ядром личности считается мотивационная сфера. Выделяют внешние и внутренние мотивы. **К внутренним мотивам относятся познавательные и социальные мотивы. Познавательные мотивы связаны с получением знаний, однако социальные мотивы не связаны с учебной деятельностью, но влияют на мотивы учения. К социальным мотивам можно отнести стремление быть грамотным, полезным обществу, добиться успеха среди сверстников, избегать неприятностей, связанных с низкими оценками и т.д. К внешним мотивам относятся получение награды за хорошие отметки. В этом**

случае получение знаний отходит на второй план. На первом месте получение высоких оценок. Они гарантируют эмоциональное благополучие ребенка. Можно добавить также чувство компетентности, которое предполагает полноценное развитие личности ребенка. Педагоги отмечают важность таких нравственно-волевых качеств, как: самостоятельность, ответственность, дисциплинированность, умение доводить дело до конца. Все перечисленные качества необходимы в процессе адаптации.

Важным аспектом адаптации является принятие индивидом социальной роли. Жизнь ребенка кардинально изменяется, все становится новым и незнакомым: круг общения, условия, вид деятельности. Ему необходима максимальная мобилизация интеллектуальных, эмоциональных и физических резервов.

Адаптация в переводе с латинского означает «приспособить». Впервые это понятие было использовано в XIX веке в биологии. Термин имеет два значения: приспособление строения и функций организма, его органов и клеток к условиям среды, направленное на сохранение гомеостаза и приспособление органов чувств к особенностям воздействующих стимулов для их оптимального восприятия и предохранения рецепторов от перегрузки [6]. Длительное функционирование приводит к переутомлению и нарушению психического и физического здоровья. Исследования показали, что ответ у доски, чтение вслух, контрольные работы приводят к учащению пульса, увеличению давления, изменению биохимических показателей крови; почти у всех детей в начале учебного года наблюдаются двигательное возбуждение или заторможенность, жалобы на головные боли, плохой сон, снижение аппетита [7]. Признаками нарушения адаптации являются изменения в поведении ребенка, повышенная утомляемость, страхи, беспокойный сон, снижение массы тела, жалобы на головную боль, тошноту, боли в животе, повышение тревожности и т.д. Причинами нарушения адаптации могут быть неадекватность требований педагога или родителей, несоответствие программ, методик, технологий возрастным и индивидуальным возможностям, психологическая и функциональная неготовность к условиям и требованиям процесса обучения, эмоциональные, интеллектуальные и физические перегрузки.

Адаптация к школе – длительный процесс, имеющий и физиологические, и психологические аспекты, который наиболее

остро протекает в начале обучения [7]. Успешность адаптации зависит от здоровья ребенка. При легкой адаптации функциональные системы организма компенсируются в течение двух месяцев, при средней адаптации ухудшение здоровья может длиться в течение полугодия, а при тяжелой адаптации симптомы ухудшения здоровья нарастают от начала к концу учебного года. Труднее всех адаптируются дети, перенесшие черепно-мозговые травмы, страдающие различными хроническими заболеваниями и имеющие расстройства нервно-психической сферы.

Психологическая адаптация – это приспособление человека к существующим в обществе требованиям и критериям оценок за счет присвоения норм и ценностей данного общества. Основными показателями психологической адаптации ребенка к школе являются формирование адекватного поведения, установление контактов с учащимися и учителем, овладение навыками учебной деятельности [7]. Социально-психологическая адаптация проявляется по-разному, но всех можно разделить на три группы: дети с легкой адаптацией (до двух месяцев), дети с более длительным периодом адаптации и со значительными трудностями адаптации. Дети, которые адаптируются в течение первых двух месяцев, быстро осваиваются в школе, приобретают новых друзей. Дети с более длительным сроком адаптации – необщительны. Они начинают адекватно реагировать на требования учителя лишь к концу первого полугодия. Третья группа детей проявляет отрицательные эмоции, у них отмечаются негативные формы поведения, не усваивают учебную программу.

В младшем школьном возрасте группами риска являются леворукие и гиперактивные дети, а также дети с нарушением эмоционально-волевой сферы. Дети с синдромом дефицита внимания выделяются чрезмерной активностью, суетливостью, невозможностью сосредоточить внимание. У леворуких детей снижена способность зрительно-двигательных координаций. Они эмоционально неустойчивы, обидчивы, у них низкая работоспособность. Дети с нарушениями эмоционально-волевой сферы – агрессивны, эмоционально расторможены, застенчивы, тревожны и ранимы.

Легче адаптируются умственно и физически здоровые дети. К сожалению, в настоящее время очень много детей, которые имеют различные нарушения в состоянии здоровья. Именно поэтому учителю требуются не только знания в области педаго-

гики, но и в области физиологии и психологии. Зная психологические и физиологические особенности младшего школьного возраста, зная каждого ребенка в отдельности и используя эти знания в построении учебного и воспитательного процесса, учитель облегчает и ускоряет адаптацию детей к школе, тем самым, способствуя процессу обучения.

ЛИТЕРАТУРА

1. *Кагермазова Л.Ц.* Возрастная психология /Электронный учебник/.
2. *Рубинштейн С.Л.* Основы общей психологии. Серия «Мастера психологии». С-Пб., 1999. 720с.
3. *Пиццаева М.В., Денисова С.В., Маслова В.Ю.* Ф 64 Физиологические основы здоровья: Учебное пособие. Арзамас: АГПИ, 2007. 300с.
4. *Гуткина Н.И.* Психологическая готовность к школе. Учебное пособие. 2004.
5. *Козлова С.А., Дедовских Н.К., Калишенко В.Д. и др.* Нравственное и трудовое воспитание дошкольников: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений. М.: Издательский центр «Академия», 2002. СС. 1–50.
6. *Головин С.Ю.* Словарь практического психолога (около 2000 терминов, 1998г.). 100с.
7. Психофизиологические основы адаптации и дезадаптации / <http://www.ulsu.ru/com/schools/opalihin/jfuekld/kuftno/dlkfyuj/>

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկությունները: Նկարագրվում են առաջատար գործունեությունը և հոգեկան նորագոյացությունները, ֆիզիկական, հոգեկան, սոցիալական, մտավոր, բարոյականային հատկանիշները, որոնք անհրաժեշտ են երեխայի դպրոց ընդունվելու ժամանակ, ներկայացված են նաև տարրական դպրոցում ֆիզիոլոգիական և հոգեբանական հարմարվողականություն ասպեկտները:

Հիմնաբառեր` զարգացում, կրտսեր դպրոցական տարիք, դպրոցին պատրաստվածություն, ֆիզիոլոգիական հարմարվողականություն, հոգեբանական հարմարվողականություն:

SUMMARY

The article presents the psychological characteristics of primary school. The leading activity and psychological structures are being described, as well as physical, mental, social, intellectual, moral and volitional qualities necessary for the school age child of; it also provides physiological and psychological aspects of adaptation in elementary school.

Keywords: development, primary school age, school readiness, physiological adaptation, psychological adaptation.

**ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ԴԱՍԵՐՈՆ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԶ**

Ժ.Վ. Ռոստոմյան

zhenyarostomyan@gmail.com

ԱՍՓՈՓՈՒՄ

Համացանցը բազում հնարավորություններից բացի տալիս է նաև հեռավար ուսուցման հնարավորություն: Հեռավար ուսուցում կազմակերպում են էլեկտրոնային փոստի, տեսականֆերանսների, ֆորումների, նաև սկայպով համաժամանակյա քննարկումների, չաթերի միջոցով:

Էլեկտրոնային դասեր անցկացնելը մեզ համար առավել կարևորվում է, քանի որ ունենք հայոց լեզվի՝ որպես օտար լեզվի ուսուցման ուսումնական ձեռնարկների, օժանդակ նյութերի պակաս: Որպեսզի այս բացը ինչ-որ կերպ լրացվի, ահա այս նոր ուսումնական 2014/15 տարին սկսեցինք ուսուցումն իրականացնել էլեկտրոնային դասերի միջոցով:

***Հիմնաբառեր**՝ էլեկտրոնային դասեր, համաժամանակյա ֆորումներ, սինքրոն և ասինքրոն ուսուցում, համակարգչային անհատական թղթապանակ, գրավոր, բանավոր խոսքի ուսուցում, աշխատանքի ստուգում, գնահատում:*

Ժամանակակից ուսանողն ազատորեն օգտվում է համացանցի և համակարգչի հնարավորություններից, փնտրում գտնում իրեն հետաքրքրող նյութը, թեման, գիտական հոդվածը, մասնակցում զանազան սոցցանցերի քննարկումներին: Ավելին, տեղեկատվության նորագույն միջոցները՝ այֆոն, պլանշետ, սմարթֆոն՝ բոլորը մեկ բառով՝ խելախոս, գրքին, գրիչին, տետրին ու բառարաններին համարժեք անհրաժեշտություն են և, ինչպես ժամանակակից գովազդներում է հանդիպում, համակարգիչն ու խելախոսը դարձել են վերը նշված

այս չորսը մեկում: Էլ չենք ասում այս սարքերի այլ կիրառությունների մասին:

Արդեն տևական ժամանակ է, ինչ համակարգիչը դարձել է ուսումնական գործընթացի կարևոր և անբաժանելի մասը, իսկ համացանցն էլ իր հերթին ընդլայնել է դրա գործունեության ոլորտները: Համացանցը բազում հնարավորություններից բացի տալիս է նաև **հեռավար ուսուցման** հնարավորություն: Հեռավար ուսուցում կազմակերպում են էլեկտրոնային փոստի, տեսակոնֆերանսների, ֆորումների, նաև սկայպով համաժամանակյա քննարկումների, չաթերի միջոցով: Մրանք պայմանականորեն անվանվում են համաժամանակյա (սինքրոն) ուսուցում: Կա նաև համացանցային ասինքրոն (ոչ համաժամանակյա, ազատ գրաֆիկով) ուսուցում:

Ուսուցման մի նոր ձև է էլեկտրոնային դասերի անցկացումը: Եվ քանի որ էլեկտրոնային դասեր անցկացնելու գաղափարը վաղուց կար, անցյալ ուստարվա վերջին այդ գաղափարը առարկայացավ ու դարձավ պահանջ: Խնդիրը միայն համապատասխան դասերը պատրաստելու, դրանք առավել մատչելի և ըստ էության ներկայացնելու, տեսաշարի բովանդակային և պատկերային կողմը ապահովելու մեջ էր, մանավանդ, որ հայոց լեզվի՝ որպես օտար լեզվի ուսուցման համար ուսումնական ձեռնարկների, օժանդակ նյութերի սուղ վիճակը ստիպում է նման միջոցներով փորձել բացը լրացնել:

Նախ մի քանի տեղեկություն էլեկտրոնային դասերի մասին:

Մրանք գրուսուցման, բանավոր խոսքի, ընթերցվող տեքստի և քերականական երևույթների տեսաշարային բացատրություններն ու այդ թեմաներով ուսանողին տրվելիք հանձնարարականներն են: Այսինքն՝ կառուցվածքով այն էլեկտրոնային ուսումնական ձեռնարկ է՝ բաղկացած ինը դասից:

Մեր դեպքում, երբ ուսանողը շաբաթը երկու անգամ լսարանային մուտք ունի, առավել նպատակահարմար է համացանցային ասինքրոն (ոչ համաժամանակյա, ազատ գրաֆիկով) ուսուցումը: Այսինքն՝ ուսուցում էլեկտրոնային փոստի և ազատ կապի միջոցով, գումարած լսարանային՝ պրոյեկտորով և էլեկտրոնային գրատախտակով պարապմունքները:

Եվ ահա արդեն մի քանի ամիս է՝ հումանիտար ինստիտուտի այն երկու այն խմբերը, որոնք հայերենի ուսումնասիրությունը սկսել են գրոյական մակարդակից, հայոց լեզվի դասընթացն անցնում են էլեկտրոնային դասերի միջոցով: Դասերը կազմված են քրք ծրագրով՝ լսարանում դրանք ներկայացնելու և բացատրելու համար, և ուսանողների էլեկտրոնային հասցեներին են ուղարկվում արդեն որպես pdf ֆայլեր:

Այժմ այս սկզբունքով կազմակերպված ուսուցման դրական և բացասական կողմերին վերաբերող մի քանի դիտարկում:

Նախ դասերի բովանդակային հազեցվածության մասին: Դասերում բավարար չափով տրված են և՛ բառապաշարի հարստացմանը, և՛ բառակազմությանն ու իմաստաբանությանը վերաբերող, և քերականական տարրական գիտելիքների կիրառությունն ապահովող, և՛ բանավոր խոսք կազմելուն միտված թե՛ բացատրական նյութը և թե՛ տնային հանձնարարությունները: Ուսանողները դրանք կատարում և պահանջվող ժամկետներում ուղարկում են դասախոսին: **Յուրաքանչյուր ուսանողի համար դասախոսի համակարգչում ստեղծված է անհատական թղթապանակ:**

Անցած ամիսների փորձը ցույց տվեց, որ

1. այս դասերը և առհասարակ ուսուցման էլեկտրոնային տարբերակը ներկա ուսանողության համար առավել հետաքրքիր են, քանի որ հրապուրիչ է ժամանակակից տեխնիկայից օգտվելու, այն աշխատեցնելուն ընձեռված լրացուցիչ հնարավորությունը,

2. անկախ դասերին մասնակցությունից՝ բոլորին ուղարկվում է նոր դասի նյութը, հետևաբար նրանք խուսավարելու պատճառ չեն ունենում,

3. լսարանային պարապմունքները չեն վերածվում տնային աշխատանքները ստուգելու ձանձրալի գործընթացի, նախապես ստուգված աշխատանքներին ընդհանուր անդրադարձ է արվում և, եթե պետք է, դրանք գնահատվում են,

4. ավելի շատ ժամանակ է հատկացվում պարզաբանումների,

5. ուսանողի ձեռքի տակ է բառապաշարը հարստացնելու նպատակով յուրաքանչյուր դասում տրված բառաշարքը, որն ամենևին էլ քիչ չէ,

6. գրեթե բոլորի հեռախոսներում առկա են դասերը, հետևաբար ավելի շատ և տևական է դասերին անդրադառնալը, առիթով, կամա թե ակամա սովորելու հնարավորությունը. Շատերը խոստովանում են, որ ամեն առավոտ երթուղայինում մինչև համալսարան հասնելը հեռախոսից կամ այֆոնից նորից ու նորից նայում են այս կամ այն բառը, թեման, քերականական նյութը,

7. գրքի բացակայության պարագայում այս մեթոդը գերադասելի է պատճենված նյութերի հայթայթումից,

8. հնարավորություն է ստեղծում ցանկացած վայրում, որտեղ համակարգիչ կա և համացանցին միացված է, օգտագործել ժամանակը, սովորել,

9. համացանցից օգտվելու հմտությունները, որ ուսանողը ձեռք է բերում այժմ դասերի միջոցով, հետագայում նրան շատ են օգնելու աշխատանքում,

10. աշխատանքի կազմակերպման այս կերպը ստիպում է ուսանողներին ավելի պատասխանատու լինել ուսուցման ողջ գործընթացի նկատմամբ,

11. ինքնուրույն սովորելը հնարավորություն է ստեղծում անհատական տեմպով յուրացնել նյութը, կախված չլինել մյուսներից, և վերջապես

12. էլեկտրոնային դասերը հուշում են, դուռ են բացում ինքնակրթության, հետագայում ինքնուրույն նյութեր գտնելու, համակարգչի առջև նստած սովորելու համար՝ ապահովելով ուսուցման շարունակական լինելը:

Թեև արդյունքի մասին խոսելը դեռևս վաղ է, սակայն նկատենք, որ այս ուսանողների առաջին և երկրորդ մոդուլների գրավորներն ամփոփվել են ավելի բարձր գնահատականներով, քան անցյալ տարվա սովորողների առաջին և երկրորդ մոդուլներինը: Եվ դա այն դեպքում, երբ այս ուստարվա մոդուլներն ավելի բարդ են եղել, քան նախորդ տարվանը: Առաջընթաց կա նաև բանավոր խոսքի ազատ կիրառության և

բառապաշարի հարստացման գործում: Դրա վկայությունն էր երկրորդ մոդուլի բանավոր հարցումը, որն այս անգամ իրականացվեց երկու խմբերի միջև մրցակցության ձևով, ուր ուսանողները միմյանց զանազան հարցեր էին տալիս քերականությունից, բանավոր հաղորդակցման օրինակներ էին ներկայացնում (ինչպես կահավորել բնակարանը, ձմեռային հագուստ, հյուրասիրություն և թխվածքի ու ըմպելիքի պատրաստություն), առաջարկում լուծել հանելուկները, մրցում շուտասելուկներով և վերջապես երգեր էին ներկայացնում:

Իհարկե, սա զուտ էլեկտրոնային դասընթաց չէ, այլ էլեկտրոնայինի և լսարանային ավանդական ուսուցման մեկտեղում՝ փոխապահովումով: Իսկ սա նշանակում է, որ եթե ուսանողը դասախոսի հետ շփվեր, կապ ունենար միայն էլեկտրոնային փոստի միջոցով, ապա անձնային-անհատական ինչ-ինչ առանձնահատկություններ, նաև դասերի որոշակի նրբությունների, խրթինության հետ կապված ըմբռնման ինչ-որ դժավարություններ կարող էին առաջանալ, իսկ այս դեպքում նման իրավիճակները բացառվում են, քանի որ ուսանողն ունի նաև **լսարանային կյանք** անմիջապես և անմիջականորեն հարցերը պարզելու, սխալներն ուղղելու համար, իսկ դասախոսն էլ՝ սովորողի անձնական, հոգեբանական ինչ-ինչ բարդություններ, ընտանեկան կամ միջավայրի հետ առնչվող զանազան խնդիրներում նրան օգնելու, իրավիճակը հարթելու, սովորողին ոգևորելու համար:

Այժմ նշենք այն թերությունները, որ էլեկտրոնային դասերի ժամանակ նկատվել են և կամ կարող են լինել.

ա) եթե բոլոր խմբերն անցնեն էլեկտրոնային դասերով ուսուցմանը, ապա որոշակի խնդիրներ կունենանք լսարանների տեխնիկական հագեցվածության հարցում /նոթբուք, ցուցադրող սարք, էկրան և այլն/,

բ) ոչ բոլոր ուսանողներն են ունենում համակարգչային հմտություններ,

գ) ուսանողների թվում կան նաև այնպիսիք, որ տանը համակարգիչ չունեն, թեև այդ հարցը նրանք լուծում են համալսարանի ընթերցարանի համակարգիչներից օգտվելով:

Ասվածը գրեթե ոչինչ է այն առավելությունների նկատմամբ, որոնք վերը նշվեցին:

Մի հավելում ևս. քանի որ ուսանողները մեր օգնությամբ իրենց համակարգիչներում և որոշ տիպի հեռախոսներում արդեն ներբեռնել են հայերենի գրանշանները, գիտեն հայերենի ստեղնաշարից օգտվել, որպես առաջին հանձնարարություն նրանք հայերենով տպել և ներկայացրել են իրենց անձնական CV-ները: Առաջիկայում նախատեսում ենք նրանց հետ կազմակերպել նաև սինքրոն հաղորդակցություն, այն է՝ ֆորումներ ստեղծելը, սոցցանցերում չաթով (ներքին գրագրությամբ) կապվելը, կարծիքներ, մտքեր փոխանակելը: Մրանք լեզուն սովորելու, հայերենով գրելու, ուրիշի գրածին պատասխանելու, հասկանալու, նաև գրքեր և հոդվածներ կարդալու կարևոր միջոցներ են:

Ամփոփենք:

Ժամանակակից աշխարհի, գիտության և կրթության զարգացումը մեծապես կախված է տեղեկատվական, հաղորդակցային և էլեկտրոնային տեխնոլոգիաների մարդու իմացությունից և դրանց ի տեղի կիրառումից: Ուստի էլեկտրոնային դասերի ներդրումը ուսումնական գործընթաց մեր կարծիքով ոչ միայն արդյունավետ է, այլև անհրաժեշտ, օրա-պահանջ:

АННОТАЦИЯ

Современное обучение – это, в первую очередь, обучение практической жизни, внедрение новых технологий и их эффективное использование ради приобретения новых знаний и навыков. Теперь эту возможность нам предоставляет Интернет. E-learning, или электронные уроки проводятся в основном при дистанционном обучении, но это возможно также реализовать на уроках армянского языка как иностранного. В статье речь идет о пользе и результатах этих уроков.

Ключевые слова: электронные уроки, синхронные форумы, асинхронные и синхронные обучения, электронные индивидуальные папки, устное и письменное обучение, проверка работ.

SUMMARY

Apart from many opportunities that the Internet gives us, it also provides us with that of distance learning. Distance learning is carried out through electronic mail, video conferences, forums, and also synchronous discussions on Skype. Electronic lessons become even more important for us since we have a shortage of manuals and additional materials for teaching Armenian as a foreign language. To somehow fill in the gap, we have started the new 2014–2015 academic year our classes implementing electronic lessons.

Keywords: *electronic lessons, synchronous forums, synchronous and asynchronous teaching, personal computer folder, written, oral teaching, work check, assessment.*

ГОДИЧНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ

Сборник научно-методических статей

Главный редактор – М.Э. Авакян
Корректор – Э.А. Рухкян
Корректор – Ш.Г. Мелик-Адамян
Компьютерная верстка – А.С. Бжикян

Адрес Редакции научных изданий Российско-Армянского
(Славянского) университета:

0051, г. Ереван, ул. Овсепя Эмина, 123
тел/факс: (+374 10) 27-70-52(внутр. 42-02)
e-mail: redaction.rau@gmail.com

Заказ № 5

Подписано к печати 20.04.2015г.

Формат 60x84¹/₁₆. Бумага офсетная № 1.

Объем 13 усл. п.л. Тираж 200 экз.